Հայկական գիտահետազոտական համցույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Մ. ՑԵ. ԿՈՍՏԵՐԻՆ

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ

69
Կ-75

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԲՆԱԿՈՄՇԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1932

24.05.2013

25 SEP 2010

Մ. ՅԵ. ԿՈՍՏԵՐԻՆ

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ Ի Ջ Ե Ց Ո Ւ Մ Ը

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՐԴՅՈՒՆԱԿՈՄՇԻՆ. ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1932

28.170

Պետհրատի տպարան
Գլավլիտ Ե 6 (ե)
Պատվեր 6094
Տիրաժ 1000

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ

## ԳԼՈՒԽ I

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*«Ամեն մի հեղափոխության մեջ,—ասում եր Լենինը դեռևս 1918 թ. («Խորհրդային իշխանության հերթական խնդիրները»),—այն բանից հետո, յերբ լուծվում ե պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու հարցը, այն չափով, վորով հիմնականում լուծվում ե եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յենթարկելու հիմնական խնդիրը,— անպայման առաջին պլանի վրա յե դրվում կապիտալիստականից ավելի բարձր հասարակական հանրակազմ ստեղծելու, այն ե՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, իսկ այդ կապակցությամբ (և դրա համար)՝ այն ավելի բարձր հիմքերով կազմակերպելու արմատական խնդիրը»։*

*Դրա համար անհրաժեշտ ե վերակառուցել գոյություն ունեցող արդյունաբերությունը և կառուցել նոր ու հզոր արդյունաբերություն, առանձնապես արտադրության միջոցների արդյունաբերություն, վորը կապահովի տնտեսության մյուս ճյուղերի վերակառուցումը և մեր Միության տնտեսությունը կազատի արտասահմանյան կախումից։*

*Նոր գործարանների կառուցման և հների վերակառուցման հաջողությունները վորոշում են Միության ինդուստրացման արագությունը, սոցիալիզմի կառուցման արագությունը։ «Յեթե լավ, արագ և եժան կառուցենք, ավելի շուտ կհասնենք սոցիալիզմին» (Ստալին), ավելի շուտ կբավարարենք վերակառուցվող ժողովրդական տնտեսության կարիքները և բանվորների ու գյուղացիների կարիքները, ավելի շուտ կազատագրվենք կապիտալիստական յերկրների կախումից։*

*Յեթե վատ, դանդաղ և թանկ կառուցենք, մեր ամբողջ առաջխաղացումը կդանդաղի և նույնիսկ կարող ե կանգնել վիժման վտանգի առաջ։*

*«Բոլոր պայմանները մեզ թելադրում են արագ տեմպերով զարգացնել մեր արդյունաբերությունը» (Ստալին)։*

*Կապիտալիստները նույնպես անընդհատ կերպով վերակառուցում են իրենց արդյունաբերությունը, շինում են նոր գործարան-*

ներ, ուժեղացնում են իրենց ռազմական կարողությունը: Մենք այդ յերբեք չպետք է մոռանանք: Մեր հետամնացությունն այնքան մեծ է, վոր մենք պետք է շատ արագ առաջ շարժվենք, վորպեսզի վոչ միայն հասնենք, այլև առաջ անցնենք:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր անխուսափելի յե պատերազմը հաղթական սոցիալիզմի յերկրի—ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների միջև, մենք պետք է ամեն կերպ բարձրացնենք մեր ռազմական կարողությունը: Պատերազմը նորից մեզ կկտրի ամբողջ աշխարհից, և մենք ստիպված կլինենք ամեն ինչ ձեռք բերել միայն մեր յերկրի ներսում:

Ուժեղ արդյունաբերությունը, հատկապես ծանր արդյունաբերությունը (և առաջին հերթին մետաղագործականը) մեզ հնարավորություն կտա թե ռազմական և թե տնտեսական տեսակետից դիմագրավել համաշխարհային բուրժուազիայի հարձակմանը:

Արդյունաբերական շինարարության վրա (այսինքն շենքերի և ինժեներական սարքավորումների վրա) այս հնգամյակում (1928–29 — 1932–33 թ. թ.) ծախսվելու յե առնվազն 16.500 միլ. ռուբլի (սարքավորման հետ միասին) և կառուցվելու յե մոտ 2500 հատ գործարան*):

Նոր շինարարության շնորհիվ արդյունաբերությունը կավելանա մոտ 3 անգամ, ընդ վորում ծանր արդյունաբերությունը (այսինքն այն արդյունաբերությունը, վորն արդյունաբերական սարքավորման արտադրանք է տալիս)—յերեք և կես անգամ:

Բայց 16.500 միլիոն ռուբլով այս ամենը կարելի կլինի կառուցել միայն մեկ անհրաժեշտ պայմանով, այն է՝ իջեցնել արդյունաբերական շինարարության ինքնարժեքը 47 տոկոսով, այսինքն մոտ կիսով չափ: Այն, ինչ հիմա մենք կառուցում ենք 100 ռուբլով, հնգամյակի վերջում պետք է կառուցենք 53 ռուբլով:

Ներկայումս մեր շինարարությունը չափազանց թանգ է: Նա վոչ միայն շատ ավելի թանգ է, քան արտասահմանյան շինարարությունը, այլև մոտ 3 անգամով ավելի թանգ է, քան Ռուսաստանի նախապատերազմյան շինարարությունը: Յեթե նախքան պատերազմը բնակարանի խորանարդ մետրը նստում էր 8—16 ռուբլի, ներկայումս այդ խորանարդ մետրը մեզ վրա նստում է 25—30 ռուբլի:

Չնայած շինարարության ինքնարժեքի իջեցման ուղղությամբ տարվող մեծ կամպանիային և չնայած ձեռք բերված համեմատաբար մեծ նվաճումներին, այնուամենայնիվ իջեցման մակարդակը դեռևս անբավարար է: Այսպես, որինակ, 1928–29 թ. ծրագրված էր շինարարության ինքնարժեքն իջեցնել 15 տոկոսով, բայց իջեցվեց միայն 10 տոկոսով, այն էլ վոչ ամեն տեղ:

Հետևանքն այն է, վոր ինքնարժեքը բարձր է: Անգամ մեր

*) Իրականության մեջ այս թիվն զգալիորեն ավելի յե լինելու, վորովհետև արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում հնգամյա ծրագիրը խիստ ավելացված է:



լավագույն շինարարություններում ինքնարժեքը բարձր է, էլ չենք խոսում սովորական և վատ շինարարությունների մասին: Դնեպրոստրոյը, չնայած մի շարք խոշորագույն նվաճումներին, բարձր ինքնարժեք ունի, ավելորդ վերադիր ծախսեր են լինում և շատ բարձր են վարչա-տնտեսական ծախսերը:

Այսպիսի թանգ շինարարությունը շատ ծանր է անդրադառնում: Ծախսում ենք ավելի շատ փող, քան հարկավոր է, կառուցում ենք ավելի քիչ, քան կարող էինք կառուցել: Թանգ ու դանդաղ շինարարությունը ծանր բեռան պես ընկնում է այն գործարանների ապրանքների գների վրա, վորոնց շինարարության համար ավելորդ գումարներ են ծախսված: Յերբեմն մի շարք նոր գործարանների արտադրանքն ավելի թանգ է լինում, քան հները. դա զգալի չափով արդյունք է այն բանի, վոր նրանց կառուցման վրա գերածախս է յեղել:

Յեթե մեզ չհաջողվի հնգամյակի վերջում շինարարության ինքնարժեքը 47 տոկոսով իջեցնել, ապա փոխանակ այդ իջեցումից ստացվելիք գումարներով կառուցվելիք գործարանների պլանը կատարելու, մենք ծրագրվածից ավելի քիչ կկառուցենք:

Իսկ այդ թերակատարումը հնգամյակը վիժեցնել ասել է, վորը միանգամայն անթույլատրելի յե:

Ուստի շինարարության ինքնարժեքի իջեցումը մեզ համար ինդուստրացման պլանի կատարման միանգամայն անհրաժեշտ պայմանն է հանդիսանում:

Բայց ինքնարժեքի իջեցումից բացի, մենք պետք է փոխենք նաև շինարարության պրիոմները, մանավանդ վոր այդ փոփոխությունը չափազանց կիջեցնի ինքնարժեքը:

Մեր շինարարության մեծ մասում այսոր էլ իշխում է ձեռքի աշխատանքը, հին ձևի աշխատանքը: Շինարարության տեխնիկան շատ ցածր է:

Այսպես, որինակ, մեզ մոտ 2 միլիարդանոց շինարարության վրա զբաղված է մոտ 2 միլիոն մարդ, իսկ Ամերիկայում 18 միլիարդ ռուբլանոց (ոսկով) շինարարության վրա զբաղված է միայն մեկ ու կես միլիոն մարդ, այսինքն՝ ամերիկական կառուցողի աշխատանքի արտադրողականությունը միջին հաշվով մոտ 30 անգամ ավելի բարձր է, քան մեր կառուցողի արտադրողականությունը:

Ինչի՞ շնորհիվ է այդ: Իհարկե, վոչ միայն ամերիկական բանվորի բարձր վորակի շնորհիվ, այլ գլխավորապես մեքենայացման բարձր աստիճանի շնորհիվ, ռացիոնալացման շնորհիվ:

Մեր բանվորն այդպիսի ռացիոնալացման և այդպիսի տեխնիկայի պայմաններում շատ ավելի բարձր արտադրողականություն կտա, քան տալիս է հիմա:

Մեր կառուցողի ցածր արտադրողականության պատճառը, ցածր տեխնիկայից բացի, պետք է փնտրել նաև այն բանում, վոր մեր աշխատանքը և նրա մասերը վատ են կազմակերպված, նյութերն անկանոն են մատակարարվում, ինքնակամ գործա-

խցումներ են տեղի ունենում, բանվորները պարապուրդ են տալիս և այլն:

Վերակառուցումը (այսինքն՝ արտադրության փոփոխումը ավելի բարձր տեխնիկա կիրառելու հետևանքով) և ռացիոնալացումը, վորպես ինքնարժեքի իջեցման միջոց, մեզ հարկավոր են վոչ միայն նրա համար, վոր մենք հասնենք կապիտալիստներին և նրանցից առաջ անցնենք, այլև նրա համար, վորպեսզի աշխատանքի այդ վատ պայմանները, վորը մենք ժառանգություն ենք ստացել ցարական Ռուսաստանից, փոխենք և դարձնենք սոցիալիստական:

Շահագործողներից ազատվել առանց աշխատանքի պայմանները փոխելու, դա, առանձին վերցրած, բավական չէ: Սոցիալիզմն անհնարին է առանց աշխատանքի պայմանները վերակառուցելու:

Նախահեղափոխական շրջանի համեմատական «եժանությունը» հիմնված եր աշխատանքի եժանության վրա, բանվորների ամենաանխնա շահագործման վրա: Այդ ճանապարհը մեր ճանապարհը չէ: «Եժանություն» մենք ձեռք կբերենք վոչ թե բանվորների շահագործումով, այլ բարձր տեխնիկա մտցնելով և աշխատանքը ռացիոնալացման յենթարկելով:

Միմիայն այս պայմանով է, վոր սոցիալիզմի գործը հաստատուն հիմքերի վրա կդրվի: Բայց պետք է փոխել վոչ միայն մեռած տեխնիկան: Ինքը մարդը, նրա աշխատանքը հսկայական դեր են խաղում արտադրության մեջ: Միայն մեքենայի աշխատանքը չէ, վոր պետք է հիմնված լինի գիտության վրա. գիտության վրա պետք է հիմնված լինի մարդու աշխատանքը, վորպես յուրատեսակ կենդանի մեքենայի: Այս մեքենան ևս պետք է աշխատի ամենից ավելի նպատակահարմար ձևով և գիտության կանոնների հիման վրա, վորպեսզի նվազագույն ուժ գործադրելով առավելագույն արդյունք ստացվի:

Մեծ շահույթի հետևից ընկնելով՝ կապիտալիստները նույնպես ռացիոնալացման են յենթարկում իրենց արտադրությունը: Բայց նրանց ռացիոնալացումը կատարվում է բանվորների հաշվին, վորոնց ստիպում են ավելի լարված աշխատել, իսկ ռացիոնալացման հետևանքով ազատված բանվորը փողոց են շպրտում: Մեր սոցիալիստական ռացիոնալացումը տանում է վոչ թե դեպի բանվորների դրության վատթարացումը, այլ այդ դրության բարվոքումը և տեխնիկայի բարձրացումը:

Շինարարությունից վոչ պակաս չափով հետ է մնացել մեզ մոտ նաև շինանյութերի արդյունաբերությունը: Աղյուսը մեծ մասամբ արտադրվում է տնայնագործական յեղանակով, այստեղ մեքենայացումը չնչին չափով գոյություն ունի: Մինչև իսկ Մոսկվայում կան ձեռնարկություններ, վորտեղ աղյուսի համար կավը վոտներով են տրորում:

Գաճը, կիրը, ալեբաստրը նույնպես կիսատնայնագործական յեղանակով են արտադրվում: Ժամանակակից տեխնիկայի մակար-



դակի վրա յե գտնվում միմիայն ցեմենտի և մասամբ էլ ապակու արտադրությունը, այն էլ ամենավերջին ժամանակներս միայն:

Այնուամենայնիվ ամենուրեք, թե շինարարության և թե շինանյութերի արտադրության ասպարեզում, շարժում է սկսվել ռացիոնալացման ուղղությամբ, և շատ տեղ արդեն վորոշ տեղաշարժ է կատարվում: Անցեք Մոսկվայի և այլ բազմաթիվ վայրերի շինավայրերը, և դուք կտեսնեք խոշոր առաջխաղացություն: Այլևս չկան անճոռնի կուտակումներ, հաճախ շինարարություն է գնում ձմեռը, շինարարության մեջ գործ են ածվում հատուկ շինարարական մեքենաներ, մեքենայական փոխադրիչներ, ուղային ճանապարհներ, բետոնարար մեքենաներ, վերելակներ և այլն:

Շինարարության ընդհանուր պատկերն սկսում է փոխվել: Շատ շինավայրերում դուք կտեսնեք տիպար աշխատանք, վորը համարյա արևմտա-յեվրոպական մակարդակի վրա յե կանգնած: Մի շարք շինարարություններ կարող են չկարմրել Յեվրոպայի առջև: Նրանցից առաջինն է Դնեպրոստրոյը, վորը միքանի աշխատանքներում ռեկորդ է շահել անգամ Ամերիկայի համեմատությամբ:

Ճիշտ է, շինարարության ընդհանուր մակարդակը դեռ հեռու յե յեվրոպականից և ամերիկականից: Այսպես, Ամերիկայում բնակարանային տները շինում են 2–3 շաբաթում, իսկ գործարանային կորպուսները՝ մեկ և կես ամսում: Իսկ մեզ մոտ, չնայած նախապատերազմականի համեմատությամբ ունեցած մեծ առաջադիմության, դեռ շատ հեռու յենք այդպիսի դրությունից: Բայց դրա դիմաց վոչ մի տեղ այնպիսի համառությամբ չի տարվում ռացիոնալացման և ինքնարժեքի իջեցման կամպանիան, ինչպես մեզ մոտ: Յեվ վոչ մի տեղ չկա այնպիսի արագ առաջխաղացություն, վորքան մեզ մոտ.—ուղղակի աչքերիդ դեմ ու դեմ փոխվում է արդյունաբերական շինարարության և շինանյութերի արդյունաբերության պատկերը:

## ԳԼՈՒԽ II

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Շինարարության ինքնարժեքի 31 տոկոսը կազմում են աշխատավարձի ծախքերն ու հատկացումները, 43 տոկոսը՝ շինանյութերի ծախքերը և 10 տոկոսը՝ տրանսպորտը: Կազմակերպական ծախքերը կազմում են 8 տոկոս, հարկերը՝ 3 տոկոս, մեքենայացման ծախքերը՝ միայն 1 տոկոս: Հենց միայն այս տոկոսները ցույց են տալիս, թե շինարարության ինչպիսի մասերը պետք է ավելի յեռանդուն հուպ տալ՝ ինքնարժեքն իջեցնել կարողանալու համար:

Շինարարության ինքնարժեքի իջեցման և ռացիոնալացման ամենագլխավոր ուղին արդյունաբերական շինարարության ինդուստրացումն է:

# Շինարարության ինդուստրացումը

Ամեն մի արտադրություն, յեթե նա տարվում է վոչ մեծ մասշտաբով, միշտ ավելի թանդ է նստում, քան խոշոր արտադրությունը: Նույնը և արդյունաբերական շինարարության մեջ: Ուստի մասսայական շինարարությունը տանում է դեպի ինքնարժեքի իջեցումը:

Բայց միայն մասսայականությունը բավական չե: Արդյունաբերական շինարարությունը պետք է յուրացնի մասսայական արտադրության պրիոմները, և այն ժամանակ ինքնարժեքի իջեցումն ավելի զգալի կլինի:

Շինարարության տնայնագործական պրիոմները, ձեռքի աշխատանքի գերակշռությունը պետք է փոխարինել խոշոր արտադրության պրիոմներով և այնտեղ պետք է գերակշռի մեքենան:

Տնայնագործական յեղանակը [illegible] շինարարության մեջ նրա ժամանակակից թափին անհնարին է: Ժամանակակից «յերկինք քերողները» լոկ ձեռքի աշխատանքով կառուցելն անիմաստ է:

Շինարարության ինդուստրացման պահանջը հանդես է գալիս բացառիկ ուժգնությամբ: Հենց շինարարության արագությունը պահանջում է այդ: Անհրաժեշտ է շինարարության առանձին մասերը, լուծույթները, բետոնները և այլն առանձին-առանձին պատրաստել հատուկ ձեռնարկություններում, իսկ կառուցման վայրում կատարել միայն այդ առանձին մասերի հավաքումը:

Դռները, փեղկերը, քիվերը, հատակները, կոնստրուկցիաները (այսինքն բարդ մասերը) և այլն պետք է պատրաստել գործարանային յեղանակով, և այն ժամանակ նրանց ինքնարժեքը խիստ կիջնի:

Արտասահմանում արդեն գոյություն ունեն առանձին մասերի և անգամ պատրաստի տների ամբողջ գործարաններ: Կան հատուկ շինարարական գարդաններ, վորտեղ պատրաստվում են կրի լուծույթները, բետոնը, քարը և այլն, և այս ամենն աստիճանաբար աշխատանքի ընթացքում փոխադրվում է շինվայրը, վորտեղ միայն այդ ամենը հավաքում են:

Մեզ մոտ էլ այս ուղղությամբ վորոշ բան արվում է, վորոշ մասեր նախորոք են պատրաստվում: Մեր աչքերի առաջ մահանում է «ադամ քարտաշների» հին արհեստը, նրանց տեղը գրավում է շինարարական մասերի գործարանը, այդ մասերի հավաքումը շինվայրում արդյունաբերական պրոլետարիատի կողմից:

Մասսայական մասշտաբով առանձին մասեր պատրաստելն անհնարին է առանց այդ մասերի ստանդարտացման:

## Ստանդարտացում

Ստանդարտացում—նշանակում է արտադրել միքանի, վոչ բազմազան նմուշներ: Աշխատանքի հին յեղանակների պայմաններում յուրաքանչյուր տան, յուրաքանչյուր շենքի առանձին մասերի



չափսն ու ձևերը տարբերվում եյին միմյանցից, շինվում եյին ըստ առանձին-առանձին պատվերների:

Արտադրության մասսայականությունն առանց ստանդարտացման դժվար է և համենայն դեպս թանդ: Ինչքան ավելի մեծ է ստանդարտացումը, այնքան ավելի քիչ են նմուշները, այնքան ավելի եժան է շինարարական մասերի արտադրությունը, և դրանով իսկ եժան է շինարարությունը:

Ստանդարտացման պետք է յենթարկել շենքերի վոչ միայն մասերը, այլև նրանց տիպերը: Ստանդարտ շենքեր, ստանդարտ գործարաններ շինելն ավելի եժան է նստում, քան վոչ-ստանդարտը:

Ստանդարտացումը մեզ մոտ նոր-նոր է սկսվում: Հաստատված և արդեն իսկ տարածում գտած ստանդարտների թիվը դեռևս մեծ չե, բայց ստանդարտացման ոգուտն ու անհրաժեշտությունն ստիպում են ստանդարտացմամբ ընդգրկել շինարարության վիթխարի մի մասը:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մասեր պատրաստող գործարաններում աշխատանքը պետք է կատարվի սովորական արդյունաբերական պրիոմներով, աշխատանքի բաժանման և մեքենայացման միջոցով: Բայց այդ բավական չե մեր շինարարության ինդուստրացման համար:

Հարկավոր է հենց իրեն՝ կառուցման մեքենայացումը:

## Մեքենայացում

Կառուցման զգալի մասը պետք է կատարել մեխանիզմների և մեքենաների միջոցով: Մոտոր, մեքենայական բետոնաբարձ, կոնվեյեր, փոխադրիչ, բետոն խառնող, մեքենայական քար ջարդող, ամբարձ, եքսկավատոր (հող անող մեքենա), մետաղ կտրելու մեքենա, արմատուրա ծռելու մեքենա և այլն, պետք է տիրապետող լինեն մեր շինարարության մեջ:

Ներկայումս մեր արդյունաբերական շինարարության 30—35 տոկոսն այս կամ այն չափով մեքենայացված է: Այդ, իհարկե, բավական չե:

Մեքենայացման միջոցով մենք վոչ միայն արագացնում և հեշտացնում ենք կառուցման աշխատանքները, նվազեցնում բանվորական ձեռքի պահանջը, այլև խիստ իջեցնում ենք շինարարության ինքնարժեքը: 1933 թ. ուժեղ մեքենայացման շնորհիվ մեր շինարարության ինքնարժեքը պետք է իջնի 5—8 տոկոսով:

Ճիշտ է, կառուցման մեքենայացումն ավելի դժվար գործ է, քան առանձին մասերի պատրաստման մեքենայացումը, և հնարավոր է միայն խոշոր շենքերի վրա և շինարարական կենտրոններում: Աշխատանքի վոչ-մշտական վայրը և մեքենաների աշխատանքի սեզոնային բնույթը դանդաղեցնում են մեքենայացումը:

Մեքենայացումը դժվարանում է և այն հանգամանքի շնորհիվ, վոր վո՛չ բանվորները և վո՛չ էլ տեխպերսոնալը բարդ մեքենաների վրա աշխատելու փորձ չունեն: Արտասահմանյան մեքենաների հետ

յերբեմն տրվում է,—ինչպես ընկ. Ա. Պ. Ռոզենհոլցն է ասում,— այն պատմությունը, որը նկարագրել է Ի. Ա. Կռիլովը «Կապիկն ու ակնոցները» առակում:

Առաջին շրջանում գրեթե ամեն տեղ մենք տեսնում ենք, որ մեքենաների ջարդվածք հաճախակի յե լինում և նրանք ավելի քիչ ինտենսիվությամբ են օգտագործվում: Կա նաև այն, որ տեխպերսոնալի որոշ մասը կանխակալ կարծիք ունի մեքենայացման դեմ, հատկապես նրա արագ կիրառման դեմ:

## Համատարած շինարարական սեզոն

Մեքենայացումը մեծացնելու, շինարարությունն արագացնելու համար անհրաժեշտ է յերկարացնել շինարարական սեզոնը և անգամ համատարած շինարարական սեզոն մտցնել:

Շինսեզոնը յերկարացնելու, հատկապես անընդհատ տարեկան սեզոն կիրառելու դեպքում մեքենաների բեռնավորումը կլինի առավելագույն չափի, ուրեմն նրանց աշխատանքն առավելագույն չափով օգտավետ կլինի: Բացի այդ, համատարած ու յերկարատև շինսեզոնը կարագացնի շինարարությունը, որը նրա եժանացման պայմաններից մեկն է, որովհետև շինարարության մեջ դրվող հսկայական գումարներն ավելի քիչ վեր ընկած կմնան:

Ինչպես հայտնի յե, մենք չափազանց տուժում ենք ավելորդ դանդաղ շինարարությունից: Կլիմայական դաժան պայմանների շնորհիվ մեր ունեցած կարճատև շինսեզոնը մենք առավել ես կարճացնում ենք մեր անկանոն աշխատանքով: Շինսեզոնն ուշ է սկսվում. մինչև որ փող են բաց թողնում, նախագիծ են պատրաստում, մինչև տեղից ժաժ են գալիս, շինանյութ են պատրաստում, արդեն հունիսի վրա յե հասնում: Անցնում է յերկու-յերեք ամիս, և ահա անձրևոտ աշունն է, իսկ նրա քամակից՝ խստաշունչ ձմեռը:

Շինսեզոնը կարող է սկսվել առաջին իսկ տաք օրերից, իսկ մի քանի հատկապես նախապատրաստական աշխատանքներ պետք է սկսվեն ձմեռվա վերջին շաբաթներից, յերբ յեղանակը մեղմանում է: Մի քանի շինարարություններում աշխատանքը կարելի յե կատարել նաև ձմեռը, շինվայրը տաքացնելով, բայց քանի որ մի շարք շինվայրերում զանազան պատճառներով (տեխնիկական նկատառումներով կամ թանգությունը նկատի ունենալով) այդ անկարելի յե, ապա այնպես պետք է տանել աշխատանքը, որ ձմեռը եվ շինարարություն կատարվի, գոնե ոչ բոլոր մասերում:

Ձմեռը հատկապես ուժեղ թափով պետք է կատարել շինանյութերի և շինարարության առանձին մասերի մթերման աշխատանքը: Իսկ ձմեռնամուտին շենքն այնքան պետք է շինված լինի, որ հնարավոր լինի այնտեղ ներսի աշխատանքները շարունակել նույնիսկ առանց տաքացնելու:

Մինչև շինսեզոնն սկսելը կարելի յե նույնպես հողամասի հետազոտություն անցկացնել, չափումներ կատարել և այլն: Այս բոլոր միջոցառումները խիստ եժանացնում են շինարարությունը:



Յեվրոպայում և Ամերիկայում (ճիշտ է, ավելի մեղմ կլիմայական պայմաններում) այդ արդեն կատարվում է: Մեզ մոտ ևս համատարած շինսեզոնին մոտենալու առանձին օրինակներ նկատվում են (Մասկվա, Լենինգրադ, Դնեպրոստրոյ, տրակտորի գործարան):

Աշխատանքներն ավելի շուտ սկսելու մասին տարեցտարի տարվող կամպանիաներն սկսում են արդեն արդյունքներ տալ: Յեթե նախորդ տարիներում սեզոնն ամբողջ թափով ծավալվում եր միմիայն օգոստոսին, որը խառնաշփոթություն եր առաջացնում թե՛ շինանյութերի և թե՛ աշխատանքի շուկայում, կառուցող բանվորների արհեստական դեֆիցիտ ստեղծելով, ապա ներկայումս ուժեղ առաջխաղացություն է նկատվում:

Մի շարք շինարարություններ կատարվում են անգամ ձմեռը, ինչպես Մասկվայում, տրակտորի գործարանում, Կուզբասում:

1929–30 թ. ձմեռը Դոնբասի 6-րդ շինարարական տրեստը ձմեռային շինաշխատանքների համար զբաղեցնում եր 12 հազար կառուցող բանվոր նախորդ ձմեռվա 3 հազարի դիմաց, և այդ ժամանակամիջոցում կատարեց 1928–29 թ. պլանի 63 տոկոսը:

Պետք է շեշտել, որ այս սեզոնին գարնանամուտի առաջին իսկ տաք օրերից աշխատանքն սկսեց յեռալ մի շարք շինվայրերում:

Հնգամյակի վերջին արդյունաբերական շինարարության 80 տոկոսն ընդգրկվելու յե մեքենայացմամբ: Առայժմ շինարարական մեքենաների մեծ մասը ներմուծվում է արտասահմանից: Ներկայումս ծրագրված է մեզ մոտ արտադրել մի շարք շինարարական մեքենաներ: Մինչև հնգամյակի վերջը բետոն խառնող մեքենաների թիվը հասցնել 900-ի, քար ջարդող մեքենաներինը՝ հազարի, մեքենայական փոխադրիչներինը՝ 900-ի և այլն:

## Անընդհատ և բազմահերթ աշխատանքը

Համատարած շինսեզոնի հետ միասին հարկավոր է նաև անընդհատ շաբաթ և բազմահերթ աշխատանք:

Ուղղակի չես ուզում նայել, յերբ ամառային գեղեցիկ օրերին շինարարությունը մեռած է: Ի՞նչ է, տո՞ն է, թե՞ աշխատանքն են վերջացրել: Ո՛չ, մեկ հերթն աշխատել է 8 ժամ, գնացել, իսկ ուրիշ հերթ չկա: Ամառային ցերեկը 16–18 ժամ է տևում: Յերկուհերթի աշխատանք ամռանը և անընդհատ շաբաթ,—դրանք շինարարության միանգամայն անհրաժեշտ պահանջներն են:

Համատարած շինսեզոնը և բազմահերթ աշխատանքը պահանջում են արմատապես վերակառուցել շինարարության բոլոր հին ավանդույթներն ու պրիոմները: Միանգամայն այլ ձևի պետք է աշխատել, որպեսզի հնարավոր լինի ապահովել համատարած շինսեզոնը, բազմահերթ աշխատանքը և անընդհատ: Ավելի արագ, ավելի կազմակերպված ու ավելի ռացիոնալացված ձևերով պետք է կատարել ամբողջ աշխատանքը: Այլ ձևերով պետք է վերադասավորվի ինքը՝ բանվորական մասսան և շինարարության հրամանատարական կազմը:

Ամբողջովին գործել առանց ընդմիջումների, ամեն ինչ հասցնել

ժամանակին: Ամբողջ աշխատանքը, ջրի հոսանքի պես, պետք է ընթանա առանց ընդհատումների:

Մի ամբողջ շարք շինարարություններում արդեն մտցված են անընդհատ և բազմահերթ աշխատանքը, և նրանք մեծ արդյունք են տալիս, այնտեղ շինարարությունը շատ արագ տեմպերով է առաջ գնում, վորն անդրադառնում է ինքնարժեքի իջեցման վրա:

Ներկա սեզոնում շինարարության զգալի մասն անցնում է անընդհատ և բազմահերթ աշխատանքի:

## Ավելի շատ գիտականություն շինաշխատանքում

Տնայնա-արհեստագործական արտադրությունը հիմնված է աշխատողների, գլխավորապես վարպետների անմիջական փորձի վրա: Այն, ինչ հարյուրավոր տարվա փորձի միջոցով կուտակված է սերնդից սերունդ, պապից հորը, հորից վորդուն անցնելով, կազմում է տվյալ արհեստավորի կապիտալը:

Այստեղ նորը շատ դժվարությամբ է մուտք գործում, ամեն ինչի հիմքն են կազմում պապենական կանոնները—«այսպես էին աշխատում մեր պապերն ու հայրերը»: Գործարանային արտադրությունը հիմնված է գիտության վրա: Գիտությունն ուսումնասիրում է նյութերը, առանձին ֆիզիկական ու քիմիական յերևույթները և այդ ուսումնասիրության հիման վրա մշակում է արտադրության նոր յեղանակներ: Նյութերից վոմանց նա փոխարինում է այլ նյութերով, պրոցեսների մի մասը դեն է գցում և գործածության մեջ է դնում այնպիսի նոր պրոցեսներ, վորոնք ավելի էժան են և ավելի ուժեղ են ներգործում:

Բնական ներկանյութերի փոխարեն գիտությունը հնարում է հանքային ներկեր, բաց է անում էներգիայի նոր աղբյուրներ և այլն:

Մինչդեռ արհեստի տեխնիկան անշարժ է, գիտական տեխնիկան, ընդհակառակը, հեղափոխական է, շարունակ դեպի առաջ է շարժվում: Գիտությունը հեղափոխականացնում է նաև շինարարությունը: Ուստի հարկավոր է վերջինս էլ ավելի շաղկապել գիտության հետ:

Արտասահմանում, մասամբ էլ մեզ մոտ, գիտական-հետազոտական ինստիտուտները հետազոտում են հին և նոր նյութերը, նրանց նոր բաղադրություններ են կազմում, նոր միացումներ են հնարում, շինարարության նոր ղբիռմներ և բազմաթիվ մեքենաներ են գործի դնում:

Գիտության և պրակտիկայի շաղկապումը, վորը հեղաշրջել է վողջ համաշխարհային տնտեսությունը, մեր աչքի առաջ հեղաշրջում է նաև շինարարությունը:

Մեր մի ամբողջ շարք շինարարություններում գոյություն ունեն դաշտային և կենտրոնական լաբորատորիաներ փորձի ու հետազոտության համար: Կան մի շարք ինստիտուտներ, վորտեղ փորձնական կառուցումներ են կատարվում, աշխատանքի նոր ղբիռմներ են գործադրվում և այլն, բայց դրանք դեռևս չեն ընդ-



գրկել վողջ շինարարությունը, մանավանդ կենտրոնից հեռու վայրերում:

Իրենք կառուցողները ևս դեռ բավականաչափ չեն հարմարվել շինարարության նոր, գիտական մեթոդներին. հարկավոր է նրանց վերադաստիարակել և նրանցից ստեղծել նոր կառուցողներ:

## Ավելի շատ պլանայնություն

Մենք ամբողջապես պլանային տնտեսություն ենք վարում. հանրայնացված տնտեսությունն այլ կերպ լինել էլ չի կարող: Այդպիսին պետք է լինի նաև շինարարությունը: Շինարարությունը պետք է կատարել ամենախիստ պլանային կարգով:

Ամեն ինչ կարգ ու կանոնի տակ պետք է դնել,—թե՛ մարդկանց, թե՛ աշխատանքի ընթացքը, նյութերի մատակարարումը, դրամական միջոցները և այլն: Ամեն ինչ պետք է հաշվառման յենթարկել և շարակցել իրար, վորպեսզի՝ յերբ շինարարությունը սկսվում է, դլուխ բաց չմնալ,—այս բանը չկա, այն բանը չհասցրինք: Անպլանային շինարարությունը միշտ էլ ավելի թանդ է նստում:

Անպլանային շինարարություն կատարել, ասել է ավելորդ նյութ ու յեռանդ վատնել: Յեթե պլան կա, ապա աշխատանքը գնում է առանց ընդմիջումների, նյութերն ու մարդիկ ավելորդ ճանապարհ չեն կտրում, ամեն ինչ հասնում է իր ժամանակին, և աշխատանքի մեջ խառնաշփոթություն չի լինի:

Մեր շինարարության մեջ պլանայնությունն այնքան էլ նախանձելի չէ: Դրամը հաճախ վոչ-ժամանակին է բաց թողնվում, և յերբեմն այդ պատճառով աշխատանքը կանգ է առնում, մի այլ տեղ դրամը կա, բայց ուրիշ նյութեր են պակասում:

Շինարարության և նրա առանձին մասերի ավարտման ժամկետները խախտվում են: Նյութերի մատակարարումը կատարվում է ընդմիջումներով, իսկ յերբեմն էլ հարկ յեղածից ավելի յեն մթերում: Լինում են դեպքեր էլ, յերբ նյութերն արդեն բերված են, բայց տվյալ շինարարության տեղը փոխում են:

Բանվորի հայթայթման կարգավորումը վատ է: Դրա համար էլ մեկ տեսնում ես, այնքան բանվոր կա, վոր չեն իմանում ինչ անել, մեկ էլ տեսնում ես, վոր բանվորի համար կռվում են, խախտում են բոլոր գնացուցակները և մեկը մյուսից բանվոր է քաշ տալիս:

Անհրաժեշտ է աշխատանքն սկսել այն ժամանակ միայն, յերբ նախորոք որացուցային պլան է մշակված: Պլանը պետք է քննության առնել արտադրական խորհրդակցությունում, վորպեսզի շինարարության յուրաքանչյուր աշխատող ծանոթանա նրան, մանավանդ գիտենա իր անելիքը:

Յեթե չնախատեսված հանգամանքները գալիս են պլանը խախտելու, ապա հարկավոր է փոփոխություններ մտցնել, այնպես խտացնելով ու վերադասավորելով աշխատանքը, վոր որացուցային ժամկետը չխախտվի:

Պլանայնություն մտցնելով շինարարությունը կընթանա ժամացույցի ճշտությամբ, և, իհարկե, այդ կանդրադառնա ինքնարժեքի վրա։

Կապիտալիստական ֆիրմաներից կարելի յե սովորել, թե ինչպես պետք ե պլանավորել առանձին շինարարությունները։ Այսպես, գերմանական շինարարության մեջ վողջ շինարարության նախնական մանրամասն մշակումն ուշագրավ որինակելի յե։ Շինանյութերը բերվում են աստիճանաբար, ըստ պահանջի, այնպես վոր կառուցման վայրում յերբեք չեք տեսնի շինանյութերի կուտակումներ, վոր այնքան սովորական ե մեզ մոտ։ Շնորհիվ այդ հանգամանքի շինարարությունը քիչ տեղ ե բռնում, գրեթե այնքան, վորքան կառուցվող շենքն ե։ Այս ամենը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ ուշի-ուշով մշակված ե պլանը և ճիշտ ժամանակին կատարվում են բոլոր միջոցառումները։

Բնորոշ ե, վոր այս նախնական մշակումը և բոլոր աշխատանքների կատարման ճշտությունը հնարավորություն են տալիս միևնույն շենքի կառուցումը հանձնարարել առանձին մասնագիտացված ֆիրմաների։ Դեպքեր կան, յերբ այդ ֆիրմաների թիվը հասնում ե 14-ի։ Յերևակայեցեք, թե ինչպես կընթանար մեզ մոտ շինարարությունը, յեթե մենք մեր շինարարությունը հանձնարարեյինք վոչ թե 14, այլ գոնե նրա կեսի չափով շինկազմակերպությունների։

Այնուամենայնիվ պլանայնությունը մեզ մոտ թեև դժվարությամբ, բայց գնալով ավելի ու ավելի բարելավվում ե և վոչ միայն առանձին շինարարությունների, այլ ընդհանուր առմամբ վողջ շինարարության գծով, վորը կապիտալիստական յերկրի համար արդեն անհնարին ե, վորովհետև այնտեղ առանձին կապիտալիստական ֆիրմաների մասնավոր շահերն են տիրում։

## Նախագծման ռացիոնալացումը

Շինարարության ռացիոնալացումը և պլանայնության ամրացումը պահանջում են ռացիոնալացման յենթարկել նաև նախագծեր կազմելու գործը։ Դեռ Մարքսն եր ասում, թե մարդու աշխատանքը մեղվի աշխատանքից տարբերվում ե նրանով, վոր առաջինը, նախքան վորևե աշխատանք սկսելը, կազմում ե նրա պլանը։ Այդպես ե նաև շինարարության համար։ Նախքան բուն կառուցման աշխատանքներին անցնելը, անհրաժեշտ ե կազմել նախագիծ, վորի բոլոր մանրամասնությունները խնամքով մտածված լինեն։ Ինչպիսին ե նախագիծը, այնպիսին ել կլինի շինարարությունը։ Դրա համար ել նախագծման ռացիոնալացումը հսկայական նշանակություն ունի։

Ամենից առաջ, միանգամայն անհնարին ե կառուցման աշխատանքներն սկսել առանց վերջնական նախագիծ ունենալու։ Բայց մեզ մոտ այդ դեռ մինչև որս ել տեղի ունի, չնայած այդ մասին կան բարձրագույն կուսակցական կազմակերպությունների վճռական բանաձևերը և կառավարության խիստ դեկրետները։



1929-30 թ. շինսեզոնին, չնայած տարիներից ի վեր մենք պայքարում ենք նախագծերը ժամանակին հասցնելու համար, նախագծերի զգալի մասը դեռ պատրաստ չեր։ Այսպես, Շախտստրոյը ապրիլ ամսին ուներ ըսքիզային նախագծերի միայն 36 տոկոսը և բանուժի միայն 20 տոկոսը։ Բազվում նույնպես նախագծերը պատրաստ չեյին։ Լավ չեր դրությունը նաև այլ վայրերում։

Չի կարելի թույլ տալ, վոր շինարարությունն սկսվելուց հետո նախագծերը վերակազմության յենթարկվեն, բայց մեզ մոտ այդ պրակտիկան ես դեռ գոյություն ունի։ Այնինչ այդ պրակտիկան ձգձգվում և թանկացնում ե շինարարությունը։

Հարկավոր ե նաև պարզացնել նախագծերը հաստատել տալու պրակտիկան. ամենևին ել կարիք չկա, վոր նախագիծն անցկենա տասնյակ համաձայնեցնող հանձնաժողովներով և հաստատող հիմնարկություններով։

Հաճախ վատ նախագծերի պատճառով շինարարությունը չափազանց վատ ե գնում։ Բելոռուս-Բալթիական յերկաթգծի Սնիգիրի կայարանի աղյուսի գործարանն արտադրական և տնտեսական տեսակետից սխալ ե կառուցված։ Վառարանները ձգված են դեպի զանազան կողմեր, իսկ վառարանի անցքը մեկտեղ մեկ ծայրից ե սկսվում, մյուս տեղ՝ կողքից։ Դա անտարակույս 1 և կես անգամ թանկացնում ե աղյուսի բարձումը։ Գործարանի ջրամատակարարումն անբավարար ե։ Գործարանն ապահովված ե կավով, բայց վերջինիս վորակը վատ ե։

Յերբեմն գործարանը շինում են այնպիսի տեղում, ուր հումույթ չկա, կամ այնպիսի շենք են շինում, վոր սարքավորումը դռներից ներս չի մտնում, կամ մոռանում են ջրմուղ կառուցել և այլն։

Անփութություն, թափթփվածություն, բյուրոկրատություն, յերբեմն ել ուղղակի վնասարարության որինակներ ինչքան ուզեք։ Այս ամենը ցույց են տալիս, վոր շինարարության ռացիոնալացման գործը դեռ վատ ե, վոր մենք դեռ նոր-նոր ենք այն սկսել, և վոր հատկապես շատ են խայտառակ դեպքերը, այսպես կոչված շինարարության տնտեսական յեղանակի կիրառման ժամանակ։ Նա, հատկապես ծայրամասերում, լեցուն ե բյուրոկրատության նմուշներով։ Նախագծման և շինարարության «տնտեսական» յեղանակը հարկավոր ե մեջտեղից վերացնել։

Ուստի կառուցումը և նախագծումը պետք ե կատարեն հատուկ հիմնարկություններ, շինդրասենյակներ, վորոնք պետք ե կազմակերպված լինեն խոշոր ձեռնարկությունների որինակով, վորտեղ նախագծումը կատարվում ե աշխատանքի բաժանման միջոցով։

Ներկայումս այդ մեծ մասամբ արդեն անց ե կացված։ Միութենական Ժողկոմխորհի 1929 թ. դեկտ. 26-ի վորոշումը, վորը պահանջում եր 1929-30 թ. շինարարության 60 տոկոսը փոխադրել գործարքային յեղանակի, զգալիորեն արդեն կենսագործված ե։ Կան մի շարք շինդրասենյակներ, վորոնք ընդգրկում են շինարարությունների մեծ մասը։

Շինարարության տեմպի, շենքի չափերի, պատերի, հիմքի, ծածքերի և շինանյութերի ընտրությունն ամբողջապես նախագծման է վերաբերում: Իսկ ի՞նչպես է լինում հաճախ այդ նախագծումը: Չնայած մենք միջոցների մեծ պակասություն ունենք, այդ նախագծերն այնպես են կազմում, վոր անգամ ամերիկացի հարուստները, նայելով մեր վորոշ շինարարություններին, ասում են—«այդ մեր գրպանին ձեռ չի տալ»:

Մեր նախագծողներից շատերը դեռ միանգամայն անփույթ վերաբերմունք են ցույց տալիս ժողովրդական գումարների հանդեպ: Չգիտես ինչո՞ւ նրանք յերևակայում են, թե մեր շինարարությունը պետք է լինի լայնանիստ, ամուր, մեծաշուք և անչափ գեղեցիկ, թեկուզ և թանգ նստի: Այնինչ մեզ հարկավոր է այնքան, վորքան անհրաժեշտ է:

Արտասահմանում այլ կերպ են նայում խնդրին: Այնտեղ ավելի տնտեսավարական նախագծեր են կազմում: Դրա համար էլ միևնույն մեծության գործարանը մեզ մոտ յերկու անգամ ավելի թանգ է նստում, քան արտասահմանում: Նման վերաբերմունքը շինարարության հանդեպ ուղղակի վնասարարություն է:

Նախագծումը նաև ստանդարտ պետք է լինի, վորովհետև նա չափազանց եժանացնում և հեշտացնում է ամբողջ գործը: Արտասահմանում, հատկապես Ամերիկայում, լայն կիրառում ունի ստանդարտը նախագծման գործում: Դա 30 տոկոսի խնայողություն է տալիս:

Նախագծման ժամանակ զգալի չափով ստանդարտների տիպերի և նրանց առանձին մասերի ընտրություն է կատարվում: Հարկավոր է լինում առանձին ստանդարտների ավելի մեծ կոմբինացիա կատարել, վորը միանգամայն պարզացնում և արագացնում է նախագծումը: Այս կերպ ահագին քանակությամբ ինժեներներ ազատվում են նախագծեր կազմելուց, և նրանց կարելի կլինի ուղարկել շինարարության վրա կամ արտադրության մեջ, վորտեղ նրանց պակասն զգալի յե: Առանց ստանդարտացման՝ նախագծումը խիստ ձգձգվում է. այսպես, Դոնբասի եսքիզային նախագծերից ամեն մեկը պահանջում է 35 մարդ-ամիս, բանվորները՝ 175 մարդ-ամիս, իսկ ամբողջ նախագիծը՝ 210 մարդ-ամիս, այսինքն՝ մեկ մարդու 18 աշխատանքային տարի: Այս տեմպերով գնալով Դոնբասը մենք կկառուցենք միայն 100 տարում:

Շենքերի կորպուսների ընդհանուր տիպը մեր նախագծողների մոտ չափազանց կոպիտ ու խառնաշփոթ է: Այդ կարելի յե հեշտացնել ու պարզացնել: Պահպանողականության հետևանքով մեզ մոտ կորպուսների մեծ մասը բազմահարկ են շինում, իսկ արտասահմանում նրանք միահարկ են, վորը մեծ տնտեսում է տալիս: Կորպուսների ստանդարտացման հետ միասին դա տալիս է 50 տոկոսով միջոցների տնտեսում:

Նախագծումը պետք է նկատի ունենա շինարարությունը կատարել ինչքան կարելի յե մեծ խնայողությամբ: Նախագծողի մոտ դա պետք է լինի հիմնականը: Այսպես, հարկավոր է շենքերի միջի տարածություններն ըստ հնարավորության կրճատել:



Արտաքնոցները պետք է լինեն ներքին լուսավորությամբ, հանդերձարաններն ու ճաշարանները պետք է կառուցել կիսանկուղային հարկերում, սպասարկման սենյակները նույնպես:

Շենքերի արտաքին պատերը մինչև չորրորդ հարկը պետք է շարել 2 և կես աղյուսի հաստությամբ և կրային լուծույթով, վերևի հարկերի ներքին պատերը՝ մեկ կամ կես աղյուսի հաստությամբ և կրային լուծույթով:

Աղյուսի պատերը, վորտեղ հնարավոր է, պետք է փոխարինել շլակային բետոնով, քարով, սիլիկատային աղյուսով և այլն: Պատերի հաստությունը պետք է պակասեցնել մտցնելով շլակի, տոլմիտի, ասբեստային ծեփանյութի և այլ նյութերի մեկուսիչ միջնախավեր:

Հիմքերի ցեմենտային լուծույթները թույլատրվում են միայն այն դեպքում, յերբ հողաջրերը խոնավ է: Պետք է վերացնել մետլախյան աղյուսիկների գործածությունն արտաքնոցներում, վաննաներում, սանդուխքների աստիճանների շարվածքում և այլն: Ճակատներին չպետք է դեկորատիվ արտաքին տալ:

Պահեստներում և ոժանդակ շենքերում ներքին սվաղումներ չպետք է անել, այլ պետք է անել արտադրական սվաղումներ, այն էլ միայն այն ժամանակ, յերբ դա տեխնիկապես անհրաժեշտ է: Լուսամուտների հյուսվածքները պետք է լինեն ստանդարտ և վոչ-մետաղային:

Յերկաթ-բետոնի և յերկաթի ձեղունակալները փոխարինել փայտյա ձեղունակալներով: Կտուրները ծածկել ամեն տեսակ նոր ծածքանյութերով: Ոժանդակ և բնակության շենքերը յերբեք յերկաթով չծածկել: Ոժանդակ հարմարանքներ դնելիս կիրառել բաժանելի տիպի կոնստրուկցիաներ:

Այս ուղղությամբ ԺՏԳԽ-ը բազմաթիվ հրահանգներ է տվել, վորը պետք է տա և տալիս է ինքնարժեքի մեծ իջեցում:

Մեր շինարարություններից շատերում ուղղակի ապշեցուցիչ չափերի յե հասնում թալանչիական վերաբերմունքը շինանյութերի հանդեպ: Հարկ յեղածից շատ ավելի շինանյութ է ծախսվում, այն էլ թանգարժեք շինանյութ: Այնտեղ, վորտեղ կարելի յե ավելի եժան շինանյութ գործածել, թանգն են գործածում:

Նյութերի պահպանման գործը, վերաբերմունքը նրանց հանդեպ ուղղակի զզվելի յե: Անգամ Մագնիտոստրոյում դուք կտեսնեք, թե ինչպես թանգարժեք նյութեր թափված են ձյան տակ, հողի ու ավելցուկների հետ խառնած՝ փտում ու փչանում են:

Մեր շինարարություններում սովորաբար մեծ քանակությամբ շինանյութեր, մեքենաներ և գործիքներ չափազանց տուժում են անփույթ վերաբերմունքի շնորհիվ: Այդ անփույթ վերաբերմունքն, իհարկե, հետզհետե նվազում է, բայց մեծ դժվարություններով:

Նախագծողները յերբեմն ավելորդ ամրություն են նախատեսում, քրեյական պատասխանատվությունից կամ վնասարարության մեջ մեղադրվելուց վախենալով: «Ամուր կլինեմ, թե չէ վորևէ պատահմունքի համար բանտ կնստեցնեն», մտածում է նա և զոռ է տալիս բարձր նորմաների:





1007
33882

Բարեխիղճ մասնագետներին համապատասխան յերաշխիքներով պետք է ապահովել նման տրամադրությունների հանդեպ։

Նախագծման հետ միասին պետք է կանոնավորել նաև նախահաշիվների կազմության հարցը։ Յերբ նախահաշիվը կազմում են, նրանով ցույց տրված գումարը շինարարությունն սկսելուց հետո ավելանում է։ Հետևաբար ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել նախագծման այս մասին։ Նախահաշիվը պետք է այնպես կազմված լինի, վոր մազաչափ անգամ տարբերություն չլինի։

## Նյութերի խնայողություն

Մեր շինարարությունը շատ է տուժում նյութերի շռայլ վատնումից։

Նյութերի ամենախիստ խնայողությունը պարտադիր կանոն պետք է լինի ամեն մի շինարարության համար, մանավանդ վոր շինարարության ներկա թափի պայմաններում մենք ամբողջ ժամանակ շինանյութերի դեֆիցիտ ունենք։ Յեվ այդ դեֆիցիտը մեծ դժվարություններ է ստեղծում շինարարության ռացիոնալացման ու էժանացման համար։ Իսկ առանձին նյութերի դեֆիցիտը յերբեմն հասնում է մինչև 70 տոկոսի։

Շինանյութերի պակասը վերացնելու համար հարկավոր է վոչ միայն ավելացնել նրանց արտադրությունը, այլև ավելի խնայողաբար ծախսել։ Խնայողությունը չափազանց հարկավոր է, յեթե անգամ շինանյութերի պակաս չլինի։ Ինչո՞ւ ավելորդ նյութ ծախսել, յերբ կարելի յե ավելի քչով գործը գլուխ բերել։

Արտադրության ռացիոնալացումը կայանում է նրանում, վոր ըստ ամենայնի լրիվ է ոգտագործվում հումույթի ամեն մի տեսակը, ամեն մի նյութը և այլն։

Ռացիոնալացված արտադրությունն անավելցուկ ռացիոնալացում է։ Նույն բանը պետք է լինի նաև շինարարության մեջ։

Ամերիկական շինարարությունը գրեթե ավելցուկ ու կտրտանք չունի, իսկ մեզ մոտ՝ վորքան ուզեք։ Ամեն ինչ պատրաստվում է նախորոք և ճիշտ հաշվով։ Դրանից բացի, ամերիկացիները թանգարժեք տեսակի անտառանյութը գործածում են միայն շենքի պատասխանատու մասերում և միայն այդ մասերի համար է, վոր պահանջում են բարձր վորակի նյութեր։ Ավելի քիչ պատասխանատու մասերում գործ են ածում ավելի ցածր վորակի ու տեսակի անտառանյութ, միայն թե չոր։ Այս ամենի հետևանքով խնայվում է վոչ միայն թանգարժեք շինանյութը, այլև տասնյակ միլիոնավոր ռուբլու գումար։

Մեր մի շարք շինարարությունները շինանյութերի տնտեսման հետևյալ կանոններն են առաջադրել։

Թանգարժեք նյութերը նորմայով բաց թողնել։ Նախագծով նախատեսված չափից ավելի մեծ չափի նյութերի գործածությունը չթույլատրել։ Չգործածել այնպիսի չափերի մեխեր ու բոլտեր, վորոնք տվյալ մասի ամրության համար պահանջվող չափից ավելի մեծ են։ Ամեն կերպ ոգտագործել ավելցուկներն ու կտրտանքը,



ամբողջ կտորները մանր աշխատանքի համար գործածելը չթույլատրելով։ Կորված և ձևավորված շինափայտը չգործածել ոժանդակ սարքերի կամ ժամանակավոր հարմարանքների համար։

Աչքի չափի վրա չհիմնվել շինանյութերը չափելիս, այլ կիրառել չափման գիտական յեղանակներ, գործածելով հատուկ գործիքներ։ Թույլ չտալ, վոր չնչին չափով անգամ մեխերը, բոլտերը, պտուտակները, մանր գործիքները և այլն ցրիվ տրվեն կառուցվող շենքերի զանազան անկյուններում։ Աշխատանքի վայրում յերևան հանել տեղական նյութերը և լայն չափով ոգտագործել։ Վորտեղ հնարավոր է, գործածել ավելի պարզ ու էժան նյութեր, որինակ՝ պատերը սպիտակացնել կրով։

Յուղաներկը չգործածել լուսամուտների և դռների համար։ Ներքին կահավորման իրերը ներկել լաքով։ Թանգարժեք ներկեր բոլորովին չգործածել։ Ոժանդակ սարքերի համար (մառաններ, ճաշարաններ և այլն) գործածել բուն շինարարության համար անպետք անտառանյութ։

Հատակները ծածկել տաք ձիթաներկով, ներկել չորանալուց հետո։ Նյութերի ամրությունն աչքի չափով չվորոշել, այլ փորձ կատարել և ոգտագործել դաշտային ու կենտրոնական լաբորատորիաները։ Շինփայտը չծանրաբեռնել նյութերի անկանոն դարսվածքով։ Նյութերն աշխատանքի վայրին մոտիկ տեղավորել։ Ամենից ավելի մոտիկ դասավորել այն նյութերը, վորոնք գործածվելու յեն առաջին հերթին և մեծ քանակությամբ։

Նյութերի ոգտագործումը ռացիոնալացման յենթարկելու այս կանոնները դրական ազդեցություն կունենան ինքնարժեքի իջեցման վրա։ Այդ կանոններն արդեն մեծ քանակությամբ հրատարակվում են մեր շինկազմակերպությունների կողմից և սկսում են կենսագործվել։

## Աշխատանքի արտադրողականություն

Ինդուստրացումը, մեքենայացումը և ռացիոնալացումը մեծ չափով կբարձրացնեն կառուցողական աշխատանքի արտադրողականությունը։ Բայց չի կարելի բավարարվել աշխատանքի արտադրողականության այս, այսպես կոչված, ինքնահոս բարձրացումով։ Պետք է նաև ավելի լարել մեր դեռ վոչ-բավարար չափով լարված աշխատանքը։

Պետք է մեր աշխատանքից արմատախիլ անել թափթփվածությունը, ամեն չնչին պատճառով առաջացող ճեղքվածքները և ընդհանրապես ավելի խտացնել մեր աշխատանքը։ «Ռուսը,—ասում է Վ. Ի. Լենինը,—առաջավոր ազգությունների համեմատությամբ վատ աշխատող է... Սովորել աշխատելը—այս խնդիրը խորհրդային իշխանությունը պետք է դնի ժողովրդի առաջ նրա ամբողջ մեծությամբ» («Խորհրդային իշխանության հերթական խնդիրները», 1918 թ.)։

Լենինի այս խոսքերի ճշմարտությունը դեռ մինչև որս էլ

պահպանում է իր արությունն ու այժմեականությունը: Իրոք, մենք շատ ենք տուժում այն բանից, վոր աշխատանքի լարվածության, ճշտապահության և կազմակերպվածության տեսակետից մենք շատ հեռու յենք յեվրոպական և ամերիկական բանվորներից: Ամերիկացի վորմնադիրը շարում է օրական 2.000 աղյուս, իսկ մերը՝ 600–800:

Այս ամենն, ինարկե, անդրադառնում է վողջ շինարարության և նրա արժեքի վրա: Ուստի մեր բոլոր հաջողությունների համար անհրաժեշտ պայման է հանդիսանում աշխատանքի արտադրողականության համապատասխան բարձրացումը: «Աշխատանքի արտադրողականությունը—դա յե, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենագլխավորը նոր հասարակակարգի հաղթանակման համար» (Վ. Ի. Լենին):

Շինարարության ինդուստրացումը պետք է խիստ բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը: Դրան կնպաստի նաև շինարարության ավելի թեթև տիպերի ու մասերի կիրառումը: Ուսումնասիրել, թե ինչպե՛ս պետք է դարսել նյութերը, ինչպես պետք է բարեկարգել շենքը,—այդ ամենը դրականորեն կանդրադառնա աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա:

Այս ուղղությամբ հարկավոր է խրոնոմետրաժ կիրառել, այսինքն՝ վայրկենաչափ գործիքով ուսումնասիրել բոլոր աշխատանքային շարժումները, ճիշտ կազմակերպել նյութերի շարժումը, վերացնել հակադարձ շարժումները, աշխատանքի խիստ բաժանում սահմանել, օժանդակ աշխատանքներն անջատել հիմնականներից, նախորոք տեսակավորել նյութերը:

Աշխատանքի պայմաններն ամեն կերպ հեշտացնելը և արտադրության մեջ ու կենցաղում բանվորների լավագույն սպասարկում սահմանելը կրճատում են հոսունությունը և բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը:

Հարկավոր է աշխատողների մասնագիտացում կատարել, վորպեսզի նրանք ամեն «հունարի տեր» մարդիկ չլինեն, այլ աշխատեն միայն վորոշ մասնագիտությամբ: Յեվ այն ժամանակ աշխատանքի արտադրողականությունը կսկսի ավելի արագ աճել: Այս ուղղությամբ արդեն շատ բան են արել մեր շինկազմակերպությունները:

Պետք է մասնագիտացվի նաև արտադրությունը, վորովհետև այդ դեպքում ավելի արդյունավետ կլինի ինդուստրացումը: Յերբ ձեռնարկությունը տասնյակ տեսակի իրեր է արտադրում, այդ դեպքում նրա ռացիոնալացումը չափազանց դժվար է լինում:

Աշխատանքի լարվածության և արտադրողականության բարձրացման համար խոչընդոտ է հանդիսանում այն հանգամանքը, վոր մեր կառուցողների ընդհանուր և տեխնիկական կուլտուրականությունը ցածր մակարդակի վրա յե գտնվում: Աշխատանքի ար-



տադրողականության պատշաճ բարձրացումն ապահովելու համար հարկավոր է կարճ ժամանակում բարձրացնել կառուցողների ընդհանուր և տեխնիկական գրագիտությունը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումն ուժեղ կերպով կանդրադառնա ինքնարժեքի իջեցման վրա: Ամբողջ հնգամյակի համար նախատեսված է արտադրողականությունը բարձրացնել 97,3 տոկոսով, այսինքն՝ 1927—28 թ. համեմատությամբ գրեթե կրկնակի: Իսկ յեթե այդ բարձրացումը չլինի, այն ժամանակ մենք չենք կարող շինարարության ինքնարժեքն իջեցնել նախատեսված չափով (այսինքն՝ 47 տոկոսով): Այս յերկու մեծություններն ամենասերտ կապով կապված են իրար: Բայց աշխատանքի արտադրողականության բարձրացումը հնգամյակի վերջում նույնիսկ ավելի բարձր կլինի նախատեսվածից, վորովհետև յենթադրվում է ավելի մեծ ներդրումներ անել և ավելի մեծ չափով մեքենայացում կատարել. բացի այդ մտցվում են նոր ռեսուրսներ, վորոնք բավարար չափով հաշվի չեյին առնված սկզբից, օրինակ՝ անընդհատը, սոցմրցումը, հարվածայնությունը և այլն:

Նոր մեթոդներով աշխատելու համար, աշխատանքի արտադրողականության բարձրացումն ապահովելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառուցողների վորակավորումը:

## Կադրեր ստեղծելու գործը

«Կադրերի պրոբլեմը ներկայումս, արդյունաբերության տեխնիկական վերակառուցման պայմաններում, վճռական պրոբլեմ է հանդիսանում սոցիալիստական շինարարության համար»:

«Մեր յերկրի ինդուստրացման վերաբերյալ կուսակցության դիրեկտիվը կիրառելու համար անհրաժեշտ է, մնացած ամեն ինչից բացի, ստեղծել նոր մարդիկ, ինդուստրիալ նոր կառուցողների կադրեր» (Ի. Ստալին):

Դեռևս Լենինն ասում եր—«դրության առանցքը մարդկանց մեջ է, մարդիկ ընտրելու մեջ է»:

Շինարարության ինդուստրացումը դանդաղում է շնորհիվ այն հանգամանքի, վոր մեր կառուցողների հիմնական մասսան կազմում են սեզոնիկ գյուղացիները: Նրանք շատ դժվարությամբ են վարժվում աշխատանքի նոր մեթոդներին: Պատենական պրիոմների, անայնապործության սովորույթը, նեղ մասնագիտության բացակայությունը և գործարանային կարգապահության ու կազմակերպվածության վարժված չլինելը, շատ մեծ խոչընդոտ են հանդիսանում շինարարության ինդուստրացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար:

Հետևաբար, հարկավոր է շինարարության մեջ հետզհետե ծանրության կենտրոնը դարձնել վոչ թե սեզոնիկներին, այլ մըշ-

տական բանվորներին, հատկապես, յերբ գնալով լայն ծավալ է ստանում անընդհատ շինսեզոնը:

Առանց մշտական բանվորների անընդհատ շինսեզոնն անիմաստ է: Դժվար է արտադրությունը կազմակերպել շինաշխատանքի գործարանային յեղանակով, մանավանդ մասերի մասսայական արտադրությունը, յերբ աշխատողները սեզոնիկներ են:

Բայց այդ դեռ քիչ է,—հարկավոր է փոխել և բարձրացնել կառուցողների վորակավորումը: Բանի վոր շինարարության մեջ մեքենաներ են գործելու, ապա արհեստավորը պետք է դառնա գործարանային բանվոր: Կառուցողների այսօրվա տնայնագործ ու կիսասևագործ մասսայից պետք է դաստիարակել ամենաբազմազան մասնագիտությունների տեր կառուցողների խիտ բանակ:

Այս խնդիրը հսկայական մի խնդիր է և ամենալարված աշխատանք է պահանջում: Կառուցողների թիվն արագ աճում է: 1928—29 թ. այդ թիվը կազմում եր 878.000, 1929—30 թ. մոտ 1½ միլիոնի յե հասնում, իսկ ամենայեռուն աշխատանքների շրջանում՝ մոտ 2 միլիոն: Մի աճում, վոր ինչպես տեսնում ենք, անհավատալի յե թվում: Յեվ այդ կատարվում է գլխավորապես գյուղի հաշվին:

Այս նորեկ տարրերը մեծ մասամբ ավելի ևս իջեցնում են կառուցողների տեխնիկական և կուլտուրական մակարդակը: Իսկ այդ մասսային շատ տեղ մենք ստիպված ենք կանգնեցնել մեքենաների առաջ, դնել ռացիոնալ ու լարված աշխատանքի պայմանների մեջ:

Պարզ բան է, վոր այս հում մատերիալն աշխատանքի նոր պայմաններին վարժեցնելը չափազանց դժվար է: Ուստի հարկավոր է տենդոտ աշխատանք՝ նրանց վերավորակավորելու և ուսուցանելու համար: Վերապատրաստման դասընթացներ, իրիկնային բանվորական դասընթացներ, աշակերտություն, հատուկ դպրոցներ, տեխնիկումներ— այս ամենը պետք է գործի դցել ինչքան կարելի յե շատ բանվորներ ընդգրկելով, վորպեսզի հնարավոր լինի հետ չմնալ շինարարության ինդուստրացման ընթացքից:

Բայց շինարարության ինդուստրացումը պահանջում է, մեկ կողմից՝ բարձրացնել տեխնիկական կուլտուրայի մակարդակը, իսկ մյուս կողմից՝ նա տեղ է տալիս նաև ուսում չստացած բանվորներին և ճանապարհ է բաց անում այնպիսի օպերացիաների համար, վորը պետք է սովորել կարճ ժամանակում:

Յեթե վորոշ վորակավորման տեր կառուցող բանվոր դառնալու համար մի ժամանակ հարկավոր եր յերկար սովորել, վորովհետև պահանջվում եր մի շարք տեղեկություններ, ճարպկություն, «գաղտնիքներ» և այլն ձեռք բերել, ապա ներկայումս, յերբ աշխատանքի լայն բաժանում գոյություն ունի, յերբ մեկ բանվորը մեկ օպերացիա յե կատարում, սովորել կարելի յե անհամեմատ կարճ ժամանակամիջոցում:

Այս հանգամանքի շնորհիվ զգալի չափով հեշտանում է շինա-



րարական մշտական բանվորներ պատրաստելու գործը: Բացի այդ, ուսման ծարավը մեծ է, այնպես վոր վորակավորման գործն ավելի հաջող կընթանա, իսկ արդյունաբերական բանվորի աշխատանքային կուլտուրայի ունակությունները կյուրացվեն աստիճանաբար:

Ինչքան ել վոր դժվար է տնայնագործ կառուցողներից և ուսում չստացած գյուղացիներից մշտական բանվորներ պատրաստելու գործը, այնուամենայնիվ նա լիովին կիրառելի յե:

Շինարարության ինդուստրացման հաջողության համար հարկավոր է ավելացնել կառուցող ինժեներների և տեխնիկների թիվը: Ներկայումս նրանց թիվը միանգամայն անբավարար է:

Նախատեսված է այս հնգամյակի ընթացքում պատրաստել 18—19 հազար նոր ինժեներ ու տեխնիկներ, իսկ ներկայումս կա միայն 10.000 հոգի: ՌՍՖՍՀ-ում կան 8.135 ինժեներ ու տեխնիկ, վորից 5031-ը բարձրագույն կրթությամբ, 3284-ը՝ միջին: 4979 հոգի աշխատում են արտադրության մեջ, իսկ 3096 հոգի, այսինքն 36 տոկոսը, զանազան հիմնարկություններում և վարչություններում:

Կառուցողների վորակը բարձրացնելու համար ՀամԿ (բ) Կ ԿԿ-ը մի շարք միջոցներ է ձեռնարկել առաջիկա շինսեզոնի համար: Մոբիլիզացիայի յե յենթարկված 1200 կուսանդամ, վորոնց նախորոք շինարարական ուսուցում է տրվում, 1000 պրոֆաշխատող՝ շինարարությունների պրոֆաշխատանքը բարելավելու համար, 1000 կոմյերիտական և 200 պատասխանատու աշխատող:

ՀամԿ (բ) Կ ԿԿ-ն նույնպես պահանջում է առաջիկա 2 տարվա ընթացքում վերացնել կառուցող բանվորների անգրագիտությունը, կառուցողների բանվորական ակտիվի 25 տոկոսի համար դասընթացներ կազմակերպել:

Կուսակցության բարձրագույն մարմնի այս յեռանդուն միջամտությունն անկասկած ուժեղ թափով առաջ կմղի շինարարության առողջացման և կառուցող բանվորների վորակավորման բարձրացման աշխատանքները:

## Կառավարման ռացիոնալացումը

Յուրաքանչյուր գործում, նյութերի և մարդկանց դրությունից բացի, նշանակություն ունի աշխատանքի, այդ թվում նաև կառավարման կազմակերպումը: Ուստի կառավարման ռացիոնալացման հարցերը քիչ դեր չեն խաղում շինաշխատանքների ընդհանուր ռացիոնալացման և ինքնարժեքի իջեցման գործում:

Յեթե կա ամեն ինչ—թե՛ հարկ յեղած չափով մարդիկ, թե՛ նյութեր, թե՛ մեքենաներ—իսկ շինարարության կառավարման գործը չափազանց վատ է դրված, ապա գործն առաջ չի գնա:

Կառավարման գործը նույնպես պետք է ռացիոնալացման յենթարկվի և անընդհատ կատարելագործվի: Խճողված սխեմը թե՛ ավելի թանգ է նստում և թե՛ անարտադրական է:

Չի կարելի ասել, թե շինարարության կառավարման մեր սիստեմը շատ լավ է։ Նախ՝ մեկ շինարարության տերերը շատ են, շատ են նաև շինկազմակերպությունները. դրա հետ միասին շինկազմակերպությունների մասնագիտացումը բավարար չէ։

Հաճախ մեր կազմակերպությունները հումույթի, նյութեղենի և բանուժի պատճառով իրար հետ մրցակցում են, իսկ այդ կազմալուծում է շինարարությունը։

Նույնպես ավելորդ է շատ հսկիչ կազմակերպություններ ունենալը։ Մեզ մոտ ել ով ասես, վոր չի խառնվում շինարարության գործին։ Գրեթե չկա վոչ մի խորհրդային կազմակերպություն, վորը շինարարության հսկելն իրեն պարտականություն չհամարի։

Շինարարության ղեկավար կազմը, փոխանակ իր գործով զբաղվելու, ստիպված է անվերջ նիստերի մասնակցել, գրավոր հաշվետվություններ կազմել, բանավոր բացատրություններ տալ վոչ միայն իր անմիջական պետերին, այլև շատ ուրիշ կազմակերպությունների։ Իհարկե, այս ամենն ազդում է շինարարության ղեկավար անձնակազմի աշխատանքի արտադրողականության և ընդհանրապես նրա աշխատանքի բարելավման վրա։

Վերջերս Բանգյուղտեսչությունը մի շարք վճռական միջոցներ ձեռնարկեց վերահսկողությունը, ռեվիզիաները և հետազոտությունները նվազեցնելու, ինչպես նաև ձեռնարկությունների հաշվետվությունների թիվը պակասեցնելու համար։

Կառավարման թերությունները պատճառ են դառնում ֆինանսավորման և նյութերի մատակարարման բարդ սիստեմի, և ղեկավարներն ստիպված են լինում ահագին ժամանակ վատնել բազմաթիվ կազմակերպությունների հետ մատակարարման և դրամի ստացման խնդրում ընդհանուր լեզու գտնելու համար։

Վերջին ժամանակներս խորհրդային և կուսակցական բարձրագույն մարմինների դիրեկտիվների համաձայն շատ կարևոր միջոցներ են ձեռք առնված շինարարության կառավարման գործը ռացիոնալացման յենթարկելու համար. այսպես, որինակ, շինարարությունը միավորում են շինանյութերի արտադրության հետ, կազմակերպում են մարզային միասնական շինկազմակերպություններ, կարգավորվում է նախագծեր կազմելու և հաստատել տալու, նյութեր մատակարարելու և ֆինանսավորելու սիստեմը։

## Միանձնյա ղեկավարություն

Դրանից բացի, ինչպես մեր յերկրի վողջ տնտեսության, այնպես էլ շինարարության կառավարման սիստեմում անց է կացվում միանձնյա ղեկավարությունը։

Մասսաների մեծագույն ինքնագործունեությունը և շինարարական գործերի քննարկումը բանվորության կողմից չեն խանգարի աշխատանքի անդուլ ընթացքը։ Ամեն մի աշխատանք



պետք է ընթանա ժամացույցի ճշտությամբ, իսկ այդպիսին անկարելի յե առանց միանձնյա ղեկավարության։

Վ. Ի. Լենինը դեռևս 1918 թ. եր պահանջում միանձնյա ղեկավարություն մտցնել։

«Բայց այսպես թե այնպես, խոշոր մեքենային արդյունաբերության որինակով կազմակերպված աշխատանքի պրոցեսների հաջողության համար անմռունչ կերպով մեկ հոգու կամքին յենթարկվելն անպայման անհրաժեշտ է։ Այս յենթարկումը, յեթե ընդհանուր աշխատանքի մասնակիցներն իդեալական գիտակցականություն և կարգապահություն ունեն, ավելի շատ կհիշեցնի դիրիժյորի մեղմ ղեկավարությունը։ Նա կարող է խիստ դիկտատուրության ձևեր ստանալ, յեթե չկան այդ իդեալական գիտակցականությունն ու կարգապահությունը։

«Հենց հարկավոր եր աշխատավորության Հոկտեմբերյան հաղթանակը շահագործողների վրա, հարկավոր եր կյանքի նոր պայմանների ու նոր խնդիրների աշխատավորության միջոցով ակըզբնական քննարկման յենթարկելու մի ամբողջ պատմական շրջան, վորպեսզի հնարավոր դառնար հաստատուն անցում կատարել աշխատանքային կարգապահության ավելի բարձր ձևերի, պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության իդեայի գիտակից ըմբռնմանը, աշխատանքի ժամանակ խորհրդային իշխանության ներկայացուցչի միանձնյա կարգադրություններին անմռունչ հնազանդմանը։

«Հարկավոր է սովորել աշխատավորական մասսաների զանգվածային հեղեղի պես բուռն թափով խլվող և իր ափերից դուրս հորդող միտինգային դեմոկրատիզմը միացնել յերկաթյա կարգապահության հետ աշխատանքի ժամանակ, մեկ մարդու, խորհրդային ղեկավարի կամքին անմռունչ հնազանդվելու հետ աշխատանքի ժամանակ» («Խորհրդային իշխանության հերթական խնդիրները», 1918 թ.)։

Ինչպես տեսնում ենք, Վ. Ի. Լենինը չեշտակի յեր դնում միանձնյա ղեկավարության հարցը։ Առավել ևս նա անհրաժեշտ է ներկայումս, վողջ ժողովրդական տնտեսության մեծ վերակառուցման որերին, կապիտալիզմի վերջին մնացորդների վերացման որերին, յերբ հարկավոր է վողջ աշխատանքը վերակառուցել համաձայն ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման բարձր տեմպերին։

Միանձնյա ղեկավարությունը պետք է բարձրացնի բոլորի և ամեն մեկի պատասխանատվությունը կատարվող աշխատանքի նկատմամբ, պետք է բարելավի աշխատանքի կազմակերպումը շինարարության մեջ, բարձրացնի աշխատանքային կարգապահությունը և դրանով մեկտեղ բարձրացնի նաև աշխատանքի ընդհանուր արտադրողականությունը շինարարության մեջ։

1929 թ. հոկտեմբեր ամսին Համ Կ (բ) Կ ԿԿ-ն վերակառուցման շրջանի աշխատանքների համար պահանջվող համապատաս-

խան տեմպ ապահովելու համար միանձնյա ղեկավարության սիստեմ մտցնելու կատեգորիկ պահանջն առաջադրեց: Այս հեղինակավոր ցուցումից հետո միանձնյա ղեկավարության սիստեմն իրոք ամենուրեք սկսեց ամրանալ: Իհարկե, ոչ մեկ անգամից և ոչ առանց դիմադրության հանդիպելու,—լճացածությունը, միանձնյա ղեկավարության անհրաժեշտությունը չըմբռնելը դեռ շատերի մոտ կգտնեք:

Շնորհիվ այն հանգամանքի, որ մասսաներն ընդառաջեցին այս որոշմանը և նրանց ակտիվը յեռանդուն աշխատանք կատարեց, միանձնյա ղեկավարությունն սկսեց ղարգանալ ամենուրեք, այդ թվում նաև շինարարության մեջ, թեև դեռևս ոչ լիովին:

## Փորձի փոխանակում

Ռացիոնալացման հաջողության և ինքնարժեքի իջեցման համար մեծ նշանակություն ունի զանազան շինարարությունների միջև փորձի փոխանակում կազմակերպելը:

Այս կամ այն նվաճումներն ու հաջողությունները բոլորի սեփականությունը պետք է դառնան և ոչ թե մնան իբրև գաղտնիք: Արտադրության մեջ գաղտնիքներ պահելու սիստեմը մենք կարող ենք հանգիստ խղճով թողնել կապիտալիստներին: Մեր խորհրդային շինարարության մեջ ոչ մի գաղտնիք գոյություն չպետք է ունենա: Մի բան քեզ հաջողվեց, փոխանցիր մյուսին, բոլորին:

Փորձի փոխանակման համար պետք է թե տեխպերսոնալի և թե բանվորական էքսկուրսիաներ կազմակերպել դեպի այնպիսի շինարարությունները, որտեղ նրանք կարող են իրենց համար օգտակար նորություններ գտնել: Այս գործում մեծ դեր ունեն կառուցելու թերթերը, ժուռնալները, հատուկ գրքերը և այլն:

Օրինակելի շինարարությունները գործարար էքսկուրսիայի վայր պետք է դառնան տեխպերսոնալի և բանվորների համար: Դնեպրոստրոյի շատ մասերում շինարարությունն օրինակելի յե, միքանի աշխատանքում այնտեղ համաշխարհային ռեկորդ են շահել:

Դրանից բացի, հարկավոր է հատուկ փորձնական շինարարություններ կազմակերպել, որտեղ էքսկուրսանտ կառուցողները կարողանան սովորել շինարարական նոր պրիոմների, նոր նյութերի, նոր բաղադրությունների գործածությունը և այլն:

Թեև մեր մամուլը լայն չափով յերևան է հանում շինարարության բացերը, բայց այդ չի խանգարում, որպեսզի այդ աշխատանքն էլ ավելի խորացվի ու լայնացվի: Սյասստրոյը (ցելլյուլոզի գործարան Սյաս գետի վրա) հումույթի, վառելանյութի և ջրի որակի տեսակետից անհաջող վայրում է կառուցված: Ցուցադրենք այդ շինարարությունը. տեսե՛ք, թե որտեղ չի կարելի կառուցել:

Վարոնեժում ցեմենտի գործարան կառուցեցին առանց հողա-



մասն ուսումնասիրելու, և ահա պատերը ճեղքվածք են տալիս: Նույնպես ցուցադրենք:

Տվերում աղյուսի յերկու գործարան կառուցեցին, ստիպված յեղան փակել, որովհետև կավն անպետք դուրս յեկավ: Նույնպես նախատինքի սյունին: Թե հաջողությունները և թե անհաջողությունները ցուցադրենք անխտիր, օգտագործենք ուսուցման համար:

## Արտասահմանյան փորձի օգտագործումը

Հարկավոր է նույնպես օգտագործել առաջավոր կապիտալիստական յերկրների փորձն ու տեխնիկան: Մենք շատ բան ունենք նրանցից սովորելու—տեխնիկայի, շինարարական գիտության տեսակետից նրանք դեռևս շատ բանով մեզնից առաջ են: Միանգամայն անհրաժեշտ է, որպեսզի մենք նրանցից սովորենք աշխատանքի բարձր գիտական կազմակերպումը (իհարկե դուրս շպրտելով զուտ կապիտալիստական–շահագործական տարրերը), բարձր տեխնիկան և այլն:

Կապիտալիստական յերկրները, հատկապես Ամերիկան, ինդուստրացման և մանավանդ շինռացիոնալացման փայլուն օրինակներ են տալիս:

Հսկայական քանակությամբ ամենաբազմազան մեքենաներ են գործադրվում յեվրոպական և ամերիկական շինարարության մեջ. այդ ամենը պետք է վերցնել:

Աշխատանքային բարձր կուլտուրան, աշխատանքը կազմակերպելու և ռացիոնալացման յենթարկելու ունակությունը խորհուրդների յերկիրը պետք է անպայման վերցնի: Նրանց մոտ գիտությունը բավական ամուր կապերով շաղկապված է պրակտիկայի հետ: Ամենուրեք դուք կգտնեք շինանյութեր ուսումնասիրող բազմաթիվ հետազոտական ինստիտուտներ, դաշտային և կենտրոնական շինլաբորատորիաներ. դրանց համար Յեվրոպայում և Ամերիկայում դրամ չեն խնայում:

Հարկավոր է արտասահմանյան ժուռնալներ ու գրքեր դուրս գրել, շինարարական պրակտիկայի համար արտասահման տեխպերսոնալ և բանվորներ գործուղել:

Այդ դեռ քիչ է, հարկավոր է արտասահմանից ինժեներներ ու որակյալ բանվորներ բերել, որպեսզի նրանք իրենց փորձը տան մեր կառուցողներին:

Առանձնապես կարևոր է լայն չափով գործի դնել արտասահմանյան այն ինժեներներին ու բանվորներին, որոնք աշխատում են ինդուստրացված շինարարության մեջ: Նրանց աշխատանքից և մենք շատ բան կարող ենք սովորել, իսկ սովորելուց հետո համարձակ կերպով մենք կսկսենք նրանց հասնելու և անցնելու արշավը: Նրանց տեխնիկան մենք կբազմապատկենք մեր հեղափոխական կոփվածությամբ, և արդյունքը կապիտալիզմի համար ջախջախիչ կլինի:

Դրանից բացի, մեր գիտությունն ու տեխնիկան կսկսեն զարգանալ, կսկսեն հասնել և անցնել արտասահմանյանին։ Դեռ հիմա էլ Դնեպրոստրոյը և Տրակտորոստրոյը մի շարք աշխատանքներում այնպիսի օրինակներ են տվել, որոնց ծանոթ չէ կապիտալիստական աշխարհը, իսկ որոշ խնդիրներում էլ համաշխարհային ռեկորդ են շահել։ Դրանք առայժմ մեր հետախույզներն են, մենք դեռ նոր պետք է առաջ քաշենք մեր վերջապահ զորքը և ծանր արտիլերիան։ Եվ այդ ժամանակը հեռու չէ։

## ԳԼՈՒԽ III

## ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ

Ինչպես տեսանք, շինանյութերը կազմում են շինարարության ընդհանուր արժեքի միջին հաշվով 43,5%-ը։ Ուստի շինարարության ռացիոնալացումն ու ինքնարժեքի իջեցումը շատ մեծ չափով կախված են շինանյութերի արտադրության ռացիոնալացումից և ինքնարժեքի իջեցումից։ Շինանյութերի ինքնարժեքի իջեցումը չափազանց կիջեցնի նաև արդյունաբերական շինարարության ինքնարժեքը։ Իսկ շինանյութերի ինքնարժեքի իջեցում կունենանք նրանց արտադրությունը մեծացնելով, ավելի բարձր տեխնիկա և ռացիոնալացում մտցնելով։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, շինանյութերի գրեթե ամբողջ արդյունաբերությունը տնայնագործական և կիսատնայնագործական է, այնինչ Ամերիկայում հսկայական արդյունաբերություն կա։ Նրանց մոտ ոչ-հանքային հանածոների (ավազ, խիճ, կրաքար և այլն) ձեռնարկություններում ընդամենը 10-15 բանվոր ու ծառայող կա, բայց օրական արտադրում են 3—5000 տոնն։

Այդպիսի մի արտադրության համար մեզ մոտ լինում է 5000 բանվոր և 500 սայլ։ Ի՞նչն է պատճառը. այն, որ Ամերիկայում արդյունաբերությունն ամբողջապես մեքենայացված է. նրանց մոտ՝ վիթխարի էքսկավատորներ, քար ջարդող մեքենաներ, փոխադրիչներ, բեռնատար ավտոմոբիլներ և այլն, իսկ մեզ մոտ՝ ձեռքի բահ և գյուղական սայլ։

Ամերիկայում շատ հաճախ ձեռքի բահն ամենևին չի գործադրվում մինչև բուն կառուցումն սկսելը։ Դրա շնորհիվ շինանյութերը Նյու-Յորկում ավելի էժան են, քան Մոսկվայում։ Օրինակ՝ մեկ խոր. մետր ավազն այնտեղ արժե 3— 5 ռ., իսկ Մոսկվայում՝ 10—15 ռ.։

Այդպիսի մեքենայացումը բետոնի և երկաթ-բետոնի աշխատանքներում տալիս է մինչև 30—50 %-ի տնտեսում։

Շինանյութերի արդյունաբերության ռացիոնալացումը պետք է ընթանա վողջ արդյունաբերության ռացիոնալացման ճանապարհով, իհարկե, հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին շինանյութի արտադրության առանձնահատկությունները։



Ամենից առաջ հարկավոր է ռացիոնալացման յենթարկել հումույթի որոնման և հետազոտության աշխատանքը։ Մեծ մասամբ այդ գործը չափազանց կաղում է։ Հումույթի հանույթը մեզ մոտ կատարվում է շատ հաճախ առանց նախնական լայն ու գիտական հետազոտության և հաճախ շատ հափշտակողական յեղանակներով։

Հնգամյա պլանով նշված շինարարական տեմպերի համար հետազոտությունների ու հանույթի տնայնագործական ու կիսատնայնագործական պրիոմները բանի պետք չեն, նրանց միջոցով հարկ յեղած թափին ստանալ չի կարելի։ Այդ դեռ քիչ է, մի գեղեցիկ օր հումույթի պակասի պատճառով մենք փակուղու առաջ կկանգնենք։ Հետազոտությունները վոչ թե ընթացիկ տարվա, այլ մի ամբողջ շարք տարիների պահանջները պետք է նկատի ունենան։ Այդ նպատակի համար հնգամյա պլանով խոշոր գումարներ են հատկացված։ Մի շարք հետազոտական ինստիտուտներ համապատասխան հետազոտական աշխատանք են կատարում և պետք է կատարեն առաջիկայում։

Մենք դեռ մինչև օրս էլ բավական լրջությամբ չենք վերաբերվում շինանյութերի հումույթին։ Ավազը, կավը մի՞թե արժեք ունեն։ Շատերն են դեռ այդպես մտածում և համապատասխան կերպ էլ վարվում այդ նյութերի հետ։ Իսկ Ամերիկայում կավի նկատմամբ այնպիսի վերաբերմունք են ցույց տալիս, ինչպիսին ցույց են տալիս ամենաթանկարժեք նյութերի նկատմամբ։ Չեր խանգարի, որ մենք ևս աշխատեյինք նման վերաբերմունք մշակել շինանյութերի ամեն տեսակ հումույթի նկատմամբ և այդ նոր վերաբերմունքի համաձայն փոխեյինք հումույթի հանույթի օգտագործման բնույթը։

Այս ֆրոնտում ևս պետք է պայքարել շռայլության դեմ, ինչպես մենք պայքարում ենք արտադրության մյուս բոլոր բնագավառներում։

Գիտականություն և ռացիոնալացում պետք է լինի վոչ միայն հում նյութերի հանույթի ուսումնասիրության գործում, այլև շինանյութերի արտադրության մեջ։ Տնայնագործական յեղանակներին և աշխատանքի հետամնաց պրիոմներին վերջ պետք է տալ։ «Աչքի չափով», «յարախտ» աշխատանքը, առանց հատուկ չափիչ գործիքների կոնտրոլի, շինարարության ներկա պահանջների պայմաններում չի կարող տալ հարկ յեղած արդյունքը։

Ի՞նչ խոսք կարող է լինել ստանդարտ շինարարության մասին, յեթե շինանյութերի արտադրության ասպարեզում արտադրանքի քաշն ու որակը պետք է չափվեն «աչքի չափով»։

Աշխատանքի տնայնագործական յեղանակների պայմաններում միևնույն ձեռնարկությունը միատեսակ արտադրանք չի տա, որովհետև մենք տեսնում ենք այսօր վոչ միայն աղյուսի հետամնաց արդյունաբերության, այլև ցեմենտի առաջավոր արդյունաբերության մեջ։

Ինչպես ամբողջ արդյունաբերության, այնպես էլ շինանյու-

թերի արդյունաբերության մեջ ինչքան կարելի յե մեծ մասնագիտացում պետք է մտցնել: Մասնագիտացումն ինքնարժեքի իջեցման տեսակետից կտա լավագույն արդյունքներ:

Նույնպես հարկավոր է առավելագույն չափով մեխանիզացիայի յենթարկել ինչպես հումույթի հանույթը, այնպես էլ նրա փոխադրությունն ու վերամշակումը: Այս բոլորը միասին վերցրած ռացիոնալացում կմտցնեն շինանյութերի արտադրության մեջ և նրան կդնեն սովորական խոշոր արդյունաբերության մակարդակի վրա:

Ռացիոնալացումից և տեխնիկայի բարձրացումից բացի, շինանյութերի արտադրության ինքնարժեքը կիջնի, վորովհետև յուրաքանչյուր առանձին ձեռնարկություն ավելի մեծ չափով արտադրանք կտա:

Քանի վոր շինանյութերի արդյունաբերությունը չափազանց խոշորանալու յե, ապա խոշոր արդյունաբերության բոլոր օգուտները կարտահայտվեն ինքնարժեքի իջեցման մեջ:

## Անտառանյութերի արդյունաբերությունը

Շինանյութերի արդյունաբերության ամենագլխավոր մասերից մեկն է անտառանյութերի արդյունաբերությունը, վորը շինափայտ է տալիս շինարարության համար: Նա ներկայումս ուժեղ չափով արդեն ռացիոնալացման է յենթարկվում և հետագայում էլ ավելի մեծ չափով ռացիոնալացման է յենթարկվելու:

Ամենից առաջ, նրա տեղը պետք է ճիշտ ընտրված լինի:

Գործարանի տեղի ճիշտ ընտրությունից է կախված նաև նրա արտադրանքի ինքնարժեքը: Յեթե սղոցարանը փայտամթերման վայրից շատ հեռու յե ընկած, հարկադրված պետք է լինեն փայտը յերկաթուղով կամ սայլատար տրանսպորտով ավելորդ ճանապարհ փոխադրել, վորն, իհարկե, կանդրադառնա ինքնարժեքի վրա, վորովհետև պատրաստի անտառանյութ փոխադրելը շատ ավելի եժան է նստում, քան հումույթ փոխադրելը: Դրա համար էլ անտառանյութ մշակող ձեռնարկությունը պետք է շինել փայտամթերման վայրերին մոտիկ: Հիմա այդպես էլ անում են արդեն, և նոր ձեռնարկությունները կառուցվում են մեծ մասամբ անտառային շրջաններում:

Հումույթի անբավարար օգտագործումը, ավելցուկների խոշոր քանակությունը գնալով կնվազեն շնորհիվ արտադրության ռացիոնալացման տեխնիկայի աստիճանական զարգացման: Դրան չափազանց շատ նպաստում է սղոցարանների միացումն այնպիսի ձեռնարկությունների հետ, վորոնք վերամշակում են նրանց ավելցուկները. օրինակ՝ անտառաքիմիական և թղթագործական գործարանները: Այդ միացումը կատարելով մենք ուժեղ չափով կիջեցնենք թե անտառանյութերի և թե արտադրության այդ ճյուղերի արտադրանքի ինքնարժեքը:

Ավելի կատարելագործված տեխնիկա մտցնելը և ձեռնարկու-



թյունների խոշորացումը հնարավորություն կտան ավելի արագ տեմպով ռացիոնալացման յենթարկել ամբողջ արտադրությունը: Ռացիոնալացումն սկսվում է հենց փայտամթերման աշխատանքներից՝ ավելի մեծ քանակությամբ և ավելի եժան գնով շինափայտ ստանալու նպատակով:

Փայտամթերման մեքենայացման համար հարկավոր է նաև յերկաթուղի և այլ տիպի ճանապարհներ դցել անտառի զանազան ուղղություններով:

Նույնպես հարկավոր է մթերման և փոխադրման աշխատանքներն առանձնացնել իրարից, վորպեսզի առանձին կազմակերպությունները մասնագիտանալով՝ կարողանան ավելի լավ կատարելագործել իրենց աշխատանքը: Փոխադրությունը նույնպես մեքենայացման է յենթարկվում, վորովհետև առանց դրան՝ հարկավոր կլինի հսկայական քանակությամբ ձիեր և սայլորդներ պահել:

Այն գետերը, վորոնց վրայով փայտ է փոխադրվում, նույնպես պետք է կարգի բերել: Գետերով փայտ փոխադրելու գործը նույնպես պետք է մեքենայացման յենթարկել: Աշխատանքի կազմակերպումն անշուշտ պետք է ռացիոնալացման յենթարկել: Ներկայումս սղոցարանները լրիվ չափով չեն օգտագործում փայտը, ընդամենը հազիվ 35-40 %-ով: 1,71 գերանից 1 խոր. մետր փայտեղեն է ստացվում: Հնգամյակի վերջում օգտագործման տոկոսը կբարձրանա, և 1 խոր. մետր կստացվի արդեն 1,5 գերանից:

Սղոցարանների աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա 82 %-ով: Ներկայումս, շնորհիվ շինարարության լայն թափին և շնորհիվ այն հանգամանքի, վոր փայտամթերումը հետ է մնում շինանյութի պահանջից, և փայտի չորանոցներն անբավարար են,—հնարավորություն չկա բավարար քանակությամբ չոր փայտ ստանալ: Դրա համար էլ ստիպված ենք լինում թաց փայտ գործածել, վորն անշուշտ ռացիոնալ ձև չէ:

Յեվրոպայում փայտի 60 %-ը չորանոց է գնում, իսկ մեզ մոտ՝ միայն 1 %-ը: Բացի այդ, այնտեղ հենց իրենք՝ շինկազմակերպությունները կազմակերպում են փայտի լրացուցիչ չորացման գործը, այնպես վոր փայտը շինարարություն է գնում միանգամայն չոր վիճակում: Իսկ մեզ մոտ գործածվում է մեծ մասամբ թաց կամ կիսաչոր փայտ, վոր անդրադառնում է շինվածքի վորակի և դիմացկունության վրա:

Չոր փայտի պակասը մենք յերբեք չենք կարողանա վերացնել, յեթե հույսներս դնենք բնական չորացման վրա:

Հարկավոր է արհեստական չորացում կազմակերպել: Միմիայն այդ պայմանով է, վոր մենք կկարողանանք հնգամյակի վերջում ապահովել չոր փայտի 30 %-ը:

Մտցվում են գերանների փոխադրման ամեն տեսակ կատարելագործումներ, պատրաստի արտադրանքի փոխադրումներ, թեփի ու կտորտանքի օգտագործում և այլն:

Մեծ նշանակություն ունի այն ավազանների տաքացումը,

վորտեղից փայտը սովորաբար գնում է դեպի աղոցարանը, վորովհետև դրա շնորհիվ կբարելավվի աղոցման պրոցեսը:

Անտառանյութերի արդյունաբերության մեջ 5 տարվա ընթացքում ներդրվելու յե խոշոր գումար— 1.052 միլ. ռ., վորից նոր ձեռնարկություններին՝ 471,4 միլ. ռ., հների լայնացմանն ու վերակառուցմանը՝ 196,4 միլ. ռ.: Հատուկ գումարներ են (19,6 միլ. ռ.) բաց թողնվում գիտական-հետազոտական աշխատանքների համար: 364 միլ. ռ. բաց է թողնվում անտառային տնտեսության բարելավման և փայտամթերման մեքենայացման համար:

Այսպիսի վիթխարի ներդրումների շնորհիվ անտառանյութերի ներկա արդյունաբերությունն ավելի քան կեռապատկվի և կդրվի ել ավելի բարձր տեխնիկական բազայի վրա: Արդյունքը կլինի այն, վոր ինքնարժեքը հնգամյակի վերջում կիջնի 40%-ով, ըստ վորում տախտակեղենինը 42%-ով, կլոր փայտինը՝ 34,6%-ով, ֆաներայինը՝ 48 %-ով:

## Աղյուսի արդյունաբերություն

Աղյուսի արդյունաբերությունը, վոր հիմնական նյութ է ամեն շինարարության համար, ամենից հետ մնացած արտադրություններից մեկն է հանդիսանում: Մինչև համաշխարհային պատերազմը մենք ունեյինք առնվազն 20 հազար աղյուսագործական ձեռնարկություն, ներկայումս ունենք միայն 14-15 հազար: Նրանցից միայն հազարն են քիչ թե շատ խոշոր, մնացածները մանր են ու հետամնաց: Այս արդյունաբերության մեջ մեքենայացումը չնչին չափով միայն գոյություն ունի:

Թրծման վառարանները մեծ մասամբ հին տիպի յեն, շատ տեղ կավը վոտներով են տրորում, մեքենայական կաղապարներն ու մամուլները շատ չնչին քանակություն են կազմում: Այժմ արտադրվում է 5 միլիարդ աղյուս, այլ խոսքով՝ ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացուն ընկնում է 30 աղյուս: Այնինչ Ամերիկայում դեռ մինչև պատերազմն ազգաբնակության յուրաքանչյուր շնչին ընկնում եր 230 աղյուս:

Յերկրի ինդուստրացման համար աղյուսի արդյունաբերության հսկայական աճում է պահանջվում: Բայց առանց ամբողջ արտադրության մեքենայացման և ռացիոնալացման, այդ աճումն ունենալ մենք չենք կարող և եժան աղյուս չենք ստանա: Ամենից առաջ հարկավոր է մեքենայացման յենթարկել հումքի հանույթը (եքսկավատորներ, հումքը պայթեցման միջոցով հանելը և այլն) և փոխադրությունն արտադրության վայրը: Հարկավոր են թրծման ավելի կատարելագործված յեղանակներ և լավագույն վառարաններ:

Հիմա դեռ շատ տեղերում մենք չունենք անգամ Հոֆմանի սիստեմի ողաձև վառարաններ, վորոնք չափազանց կրճատում են վառելանյութը և արագացնում թրծման պրոցեսը: Հարկավոր է այդպիսին ունենալ բազմաթիվ ձեռնարկություններում: Բայց



հարկավոր է ձեռք բերել նաև ավելի կատարելագործված, այսպես կոչված թունելային վառարաններ, վորոնց միջով դանդաղ շարժվում է հումքով բարձված սայլակը և շարժվելիս թրծում աղյուսը: Այնպես վոր արտադրությունը լինում է հետևե-հետև:

Չափազանց կարևոր է գործածել մեքենայական կաղապարներ, կավ տրորող սարքեր, ներգործարանային մեքենայական փոխադրումներ: Պետք է նկատի ունենալ, վոր ամբողջ արտադրության լիակատար մեքենայացումը նպատակավոր է միայն խոշորագույն ձեռնարկություններում (տարեկան 20 միլ. աղյուս), մասնակի մեքենայացումը՝ միջակ ձեռնարկություններում (տարեկան 6—8 միլ. աղյուս), իսկ ավելի փոքր ձեռնարկություններում կաղապարների մեքենայացումն անգամ իրեն չի ել արդարացնում:

Նույնպես հարկավոր է ավելացնել վառարանների շրջանառությունը, վորպեսզի նրանք ավելի մեծ քանակությամբ աղյուս բաց թողնեն:

Մեքենայացմանը և ինքնարժեքի իջեցմանը խանգարող հանգամանք է նաև արտադրության սեզոնայնությունը: Թանկարժեք մեխանիզմների գործածության ոգտակարությունն անկասկած կպակասի, յեթե նրանք տարեկան աշխատեն ընդամենը մի քանի ամիս միայն: Ուստի անհրաժեշտ է աղյուսի արդյունաբերության սեզոնը յերկարացնել, ինչքան վոր այդ հնարավոր է: Դրա համար հում աղյուսն ամռանն այնպիսի քանակությամբ պետք է պատրաստել, վոր թրծող վառարանները բեռնավորում ունենան նաև ձմեռը:

Ավելի մեծ ռացիոնալացում և ինքնարժեքի ավելի մեծ իջեցում ունենալու նպատակով հարկավոր է արհեստական չորացում անցկացնել, դրա համար ոգտագործելով վառարանների տաքությունը: Հարկավոր է մասամբ նաև չոր մամլում անցկացնել. դա մեծ չափով կիջեցնի ինքնարժեքը և կարագացնի աղյուսի արտադրությունը, վորովհետև կկրճատվի այն ժամանակը, վորը վատնվում է սովորական մամլելու վրա:

Չոր մամլումը տալիս է ավելի ամուր աղյուս, բայց այդ աղյուսն ել կարելի յե ազատ կերպով գործածել մի ամբողջ շարք շինարարություններում:

Արտադրության մեջ հարկավոր է մտցնել գիտական պրիոմներ— վերահսկողություն, չափում, խառնուրդի պատրաստում, հումույթի ընտրություն— այս ամենը պետք է անել վոչ թե «աչքի չափով», այլ հատուկ գործիքների միջոցով:

Ստանդարտացումն ընդգրկել է արդեն արտադրվող աղյուսի 50 %-ը, բայց այդ դեռ անբավարար է: Աղյուսի տիպը, չափը և քաշը խոշոր նշանակություն ունեն շինարարության համար, վորովհետև ազդում են նրա արտադրության ինքնարժեքի, քարտաշի աշխատանքի և շինվածքի ինքնարժեքի վրա:

Նշանակություն ունի նաև աղյուսի վորակը, վորովհետև մեր

ներկա աղյուսը ջարդվածքի խոշոր տոկոս է տալիս, վորը և բարձրացնում է նրա ինքնարժեքը:

Բացի կարմիր աղյուսի արտադրության ռացիոնալացումից, հարկավոր է նաև պակասեցնել նրա դերն աղյուսի արդյունաբերության և շինարարության մեջ, իսկ ավելի շատ արտադրել մյուս տեսակի աղյուսները: Պետք է կազմակերպել սնամեջ և ծակոտկեն աղյուսի արտադրությունը: Մեզ մոտ այս տիպի աղյուսը դեռևս անբավարար քանակությամբ է արտադրվում: Հարկավոր է նույնպես ավելի մեծ չափով արտադրել սիլիկատային աղյուսը (կրից և ավազից): Սիլիկատային աղյուսը պատրաստվում է չոր մամլումով և թրծելու փոխարեն գոլորշով է անցկացվում, վոր ավելի էժան է նստում, քան կարմիր աղյուսը:

Աղյուսի գործարանների շինարարությունն էժանացնելու համար հարկավոր է այդպիսիք նախագծել և կառուցել վոչ բազմատեսակ, այլ միատեսակ, հարկավոր է գործարանները տիպականացման, ստանդարտացման յենթարկել:

Աղյուսի արտադրությունը շինարարության վայրին մոտեցնելը նույնպես մեծ չափով կէժանացնի աղյուսը վերջինիս համար, վորովհետև չափազանց կկրճատվեն փոխադրական ծախքերը: Ներկայումս շատ հաճախ աղյուսը չափազանց հեռվից են փոխադրում: Այսպես, յեղել է դեպք, յերբ Մասկվա աղյուս են բերել Կերչից: Այս արդեն անհեթեթություն է:

Այդպիսի հեռավորության դեպքում, ինչպես նաև նկատի ունենալով աղյուսի էժանությունը, փոխադրական ծախքերն ավելի կնստեն, քան ինքը աղյուսը: Աղյուսն ինչքան հնարավոր է պետք է շինարարության վայրին մոտիկ արտադրվի:

Աղյուսի խոշոր պահանջի կապակցությամբ մեզ մոտ ամենուրեք աղյուսի գործարանների ուժեղ շինարարություն է գնում, իսկ հներն էլ լայնացվում են: Կառուցվում են աղյուսի արդյունաբերության գիգանտներ՝ հումքի հանույթի և արտադրության լիակատար մեքենայացմամբ: Ռացիոնալիզատորական ձեռնարկումները ևս լայն չափով գործադրվում են: Այնուամենայնիվ աղյուսի դեֆիցիտը չի վերացվում: Դրա համար էլ վերջերս վորոշում է ընդունված աղյուսի գործարանների շինարարությունն արագացնելու նպատակով միանգամայն պարզեցված ձևի գործարաններ կառուցել:

Գործարանի այնպիսի մի տիպ է մշակված, վորը կարելի յե կառուցել և գործի գցել միքանի ամսում:

Գերմանիայում ածխահանքերին կից աղյուսի գործարաններ կան, վորոնք ոգտագործում են ածխի հանույթի ժամանակ իբրև ավելցուկ մնացող կավային թերթաքարը: Ածխահանքերի կավային թերթաքարերն ոգտագործելու հարցը դրվում է նաև մեզ մոտ:

Ռացիոնալացման ուղղությամբ մտցվում են մոտավորապես հետևյալ միջոցառումները.

Մտցվում են այսպիսի կատարելագործումներ— ձիերով ջուր



փոխադրելու փոխարեն գործածվում է ջրմուղը, շարժական մամուլներ են դրվում, ձեռքի մամուլները փոխարինվում են մեքենայական մամուլներով, կաղապարողներն ազատվում են ոժանդակ աշխատանքներից, հումույթը մշակման է յենթարկվում ձմռանը:

Փայտը փոխարինվում է տորֆով, ածուխով, աղացարանների թեփով ու կոորտանքով:

Կավի փոխադրման վագոնետկաները ձեռքով քշելու փոխարեն քշում են ձիերով, իսկ ձիու վագոնետկաները մեքենայացման են յենթարկվում: Վառելանյութի մատուցումը մեքենայացվում է:

Արդյունքն այն կլինի, վոր այս բոլոր ռացիոնալիզատորական միջոցառումները հնգամյակի վերջում կտան ինքնարժեքի 38,5 տոկոսով իջեցում. Ներկայումս 1000 աղյուսն արժենա 30 ռ., իսկ հնգամյակի վերջում արժենալու յե 18 ռ. 65 կ.:

Ռացիոնալիզատորական աշխատանքը դեռևս 1928–29 թ. տվեց ինքնարժեքի իջեցում 10 %-ով, շնորհիվ, գլխավորապես, այն հանգամանքի, վոր շատ ձեռնարկություններում կիրառվեցին հետևյալ միջոցառումները.

1) կավը վոտքով տրորելու փոխարեն մտցվեցին կավ տրորող մեքենաներ.

2) կավը կաղապարողներին տրվեց պատրաստի վիճակում.

3) կավը և հումույթը սայլակներով փոխադրելու փոխարեն մտցվեցին ձիաքարշ վագոնետկաներ.

4) լայնացվեցին և վերակառուցվեցին չորանոցները, այնտեղ դրվեցին ռացիոնալացման յենթարկված սարքավորումներ.

5) վորակյալ բանվորներն ազատվեցին այն աշխատանքներից, վոր կարելի յեր անել անվորակ բանվորների միջոցով.

6) մեքենայացման յենթարկվեց ներգործարանային տրանսպորտը.

7) հատուկ ծածքերի տակ կավի պաշարներ կուտակվեցին անձրևային յեղանակներին աշխատելու համար.

8) թրծման պրոցեսն արագացվեց, վառելանյութի ծախքերը պակասեցվեցին շնորհիվ ավելի էժան վառելանյութի գործածության.

9) արագացվեց այրման ընթացքն անընդհատ գործող վառարաններում.

10) վառարանների աշխատանքը յերկարացվեց մինչև 11 ամիս:

Հնգամյակում աղյուսի արտադրությունը կբարձրանա մինչև 11.800 միլիոնի: Կապիտալ շինարարության մեջ ներդրվելու յե 370 միլ. ռ.: Կառուցվելու յեն մեքենայացման և ռացիոնալացման յենթարկված մի շարք գիգանտ ձեռնարկություններ, Լյուբերեցկի և Լոբնինսկի գիգանտ գործարանների տիպի:

## Ցեմենտի արդյունաբերություն

Ցեմենտի արդյունաբերությունը համեմատաբար ավելի բարձր տեխնիկական մակարդակի վրա յե կանգնած։ Այդ չի նշանակում, վոր այնտեղ այլևս վոչինչ չկա ռացիոնալացման յենթարկելու։ Բարձր տեխնիկան ինքնըստինքյան չի սպառում վողջ ռացիոնալացումը։ Բարձր տեխնիկան ել կարող ե շատ անռացիոնալ ձևով օգտագործվել։ Չնայած բարձր տեխնիկային, ցեմենտը մեզ մոտ եժան չե։ Միջին գնով 1 տակառն արժե 5 ռ. 18 կ., իսկ մի շարք ձեռնարկություններում՝ ել ավելի բարձր (խոսքը 160 կիլոգրամանոց տակառի մասին ե)։

Խ. Միության ցեմենտի գործարաններն ըստ տերիտորիայի այնքան ել ռացիոնալ ձևով չեն դասավորված։ Դրա հետևանքով ստիպված են լինում ցեմենտը փոխադրել հսկայական տարածության վրա, վորը չափազանց թանկացնում ե շինարարությունը։ Հազիվ թե ռացիոնալ կարող ե համարվել այն, վոր ցեմենտը Նովոռոսիյսկից ե փոխադրվում Մոսկվա, Լենինգրադ և Տաշքենդ։ Փոխադրական մեծ ծախքերի շնորհիվ Նովոռոսիյսկի ցեմենտը Տաշքենդում յերկու անգամից ավելի յե նստում, այնուամենայնիվ ստիպված են մեծ քանակությամբ բերել տալ, վորովհետև տեղական ցեմենտը չի բավականացնում։

Հնգամյակի ընթացքում յենթադրվում ե բավարար քանակությամբ ցեմենտի գործարաններ կառուցել հոծ շինարարության վայրերում։ Մոսկվան ստանում յե գլխավորապես կենտրոնի գործարանների և մասամբ ել (ջրային ճանապարհով) Վոլսկի շրջանի ցեմենտը։ Ուրալը՝ Վոլսկից և իր գործարաններից։ Միջին Ասիան և Սիբիրը նույնպես պետք ե գործածեն տեղական գործարանների ցեմենտը։

Գործարանները կառուցվելու յեն վոչ բազմատեսակ։

Վառարանները ևս լինելու յեն միայն յերկու տիպի— պտտվող և ավտոմատիկ— հանքային։ Ենթադրվում ե ըստ ամենայնի լրիվ օգտագործել հումքի բոլոր տեսակները։ Անթույլատրելի յե, յերբ Նովոռոսիյսկի գործարանները հումույթի մեկ յերրորդը չեն օգտագործում, այլ օգտագործում են բնական ցեմենտի համար պիտանի հումույթը միայն։

Ներկայումս ցեմենտի գործարանների մեծ մասն օգտվում ե սեփական ելեկտրական ենեռգիայից։ Իսկ յեթե ելեկտրականությունն ստացվի կենտրոնական ելկայաններից, ապա դա չափազանց կեժանացնի արտադրությունը։ Օրինակ, Մոսկվայի մոտ գտնվող Պոդոլսկում այդպիսի փոխարինումն ամեն մի տակառին տվեց 30 կոպեկի տնտեսում։

Ցեմենտի արտադրությունը մեծ քանակությամբ վառելանյութ ե սպառում։ Ցեմենտի գործարանների վառելանյութային տնտեսության ռացիոնալացումը վառելանյութի խոշոր տնտեսում կտա։ Ավելի կատարելագործված հնոցներ ունենալը, վառելանյութը (ածուխը) մանրացնելուց հետո գործածելը, հնոցավարների վորակավորման բարձրացումը, վառելանյութի տնտեսումը, բերովի վառելանյութի փոխարեն տեղական վառելանյութեր գործածելը և այլն, կնվազեցնեն վառելանյութի ծախքերը և կիջեցնեն ցեմենտի ինքնարժեքը։



Այն վայրերում, վորտեղ այրվող թերթաքարեր են գտնվում (Լենինգրադ, Պավլովսկ), պետք ե այդ գործածել իբրև վառելանյութ, իսկ նրանց մոխիրը գործածել միացնող նյութերի մեջ, ցեմենտի հետ խառնելու համար։

Վառարանների տաքացումը չափազանց կիջեցնի վառելանյութի ծախքերը։ Անօգուտ տեղը կորչող տաքությունն ու գազը կարող են գործի դրվել։

Մեր ցեմենտի գործարաններում խորհրդային իշխանության օրով կիրառված մի շարք ռացիոնալիզատորական ձեռնարկումների շնորհիվ արդեն նախապատերազմյանի համեմատությամբ մենք ունենք ծախքերի զգալի իջեցում, իսկ հնգամյակի վերջում արտադրանքի միավորին ընկնող վառելիքի ծախքը նվազելու յե 33%-ով։ Հումքի հանույթն ու փոխադրությունը մեքենայացման են յենթարկվելու։

Աստիճանաբար մեքենայացվում են նաև վառարանների բարձումը, մանրացումը և պատրաստի արտադրանքի դարսումը։

Արտադրությունն այնպես ե կազմակերպվում, վոր գործի անընդհատ։ Ցեմենտի արտադրությունը սովորաբար չափազանց տուժում ե ցեմենտի փոշուց։ Աղացքները հարկավոր ե չափազանց ամուր փակել։

Անհրաժեշտ ե մեքենայացման յենթարկել ցեմենտի փոշին տարաների մեջ լցնելու աշխատանքը։ Փայտեղեն տարան (տակառը) փայտի և մեխերի խոշոր ծախքի յե տեղիք տալիս ցեմենտի արդյունաբերության մեջ։ Ներկայումս մասամբ ցեմենտը լցնում են պարկերի մեջ։

Հետագա ռացիոնալացումը պետք ե լինի թղթի պարկերի գործածությունը։ Խոշոր շինարարությունների համար ցեմենտն արդեն առանց տարայի յեն փոխադրում, ուղղակի ավտոմատիկ կերպով բարձվող վագոններով։

Սակայն առայժմ, քանի դեռ փայտե տարա յե գործածվում, հարկավոր ե ավելացնել նրա շրջանառությունը։ Այդ դեպքում փայտե տարայի վրա գնացող ծախքերը կնվազեն։

Ցեմենտի գործարաններում ռացիոնալացումը կատարվում ե ուժեղ թափով և արդեն այն արդյունքն ե տվել, վոր ինքնարժեքն զգալի չափով իջել ե։ Այսպես, մտցվում են ավելի կատարելագործված մեխանիզմներ, կազմակերպվում ե ցեմենտն առանց տարայի փոխադրելու գործը, սկսված ե տարան հետ վերադարձնելու պրակտիկան, մեքենայացման ե յենթարկվում բարձման աշխատանքը։

Վագոնետկաները ձեռքով հրելու դժվարին աշխատանքի փո-

*խարեն Վոլսկում արդեն խնդիր է դրված ցեմենտը բարձել կոնվեյերների և հատուկ ողամուղ սարքերի միջոցով։ Մտցվում են ռելսային ճանապարհներ, մեքենայացման է յենթարկվում թղթե փաթեթումը։ Ցեմենտի արդյունաբերության վերակառուցումը կբարձրացնի նաև նրա ռացիոնալացումը, իսկ այդ բոլորը միասին կիջեցնեն ինքնարժեքը։*

*Ցեմտրեստի գծով պարապուրդները 1928–29 թ. նվազել են 26 տոկոսով, Նովորոսիյսկի ցեմենտի գործարանների գծով՝ 28 տոկոսով։ Ցեմենտն առանց տարայի ուղարկելը յուրաքանչյուր տակառի նկատմամբ տալիս է 69 կոպեկից մինչև 1 ռ. 19 կ.-ի տնտեսում։*

*Ցեմենտի նոր գործարանների շինարարությունը գնում է բարձր տեխնիկա, առավելագույն ավտոմատիզացիա և մեքենայացում ունեցող խոշոր տիպի ձեռնարկություններ կառուցելու գծով։*

*Հինգ տարվա ընթացքում ցեմենտի արդյունաբերության մեջ ներդրվելու յե 300 մլ. ռուբլու մի պատկառելի գումար։ Ցեմենտի արտադրությունը 11,9 մլ. տակառից հասնելու յե 41 մլ. տակառի, այսինքն՝ գրեթե քառապատկվելու յե։ Հենց միայն այդ ինքնարժեքի խոշոր իջեցում կտա։*

*Ռացիոնալիզատորական ձեռնարկումները և կատարելագործված տեխնիկան կտան նոր իջեցում։ Արդյունքը կլինի այն, որ մեկ տակառի ինքնարժեքը 5 ռ. 18 կ.-ից կիջնի 3 ռ. 20 կ.-ի, կամ 38,3 %-ով ամբողջ Միության մասշտաբով, իսկ աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա 24 %-ով։*

## Կիր, ալեբաստր, գաճ

*Շինարարության մեջ խոշոր դեր են խաղում կիրը, ալեբաստրը և գաճը։ Նրանց հանույթի արդյունաբերությունը շատ հետամնաց է։ Կրի արտադրությունը շատ անբավարար է, այնինչ նա շատ դեպքում կարող է փոխարինել հասարակ ցեմենտին։*

*Կրի, ալեբաստրի և գաճի հանույթն ու արտադրությունը նույնպես նախատեսված է փոխադրել ավելի բարձր տեխնիկայի բազայի վրա, ավելի կատարելագործված վառարաններ գործածել, աղացող սարքավորումներ ձեռք բերել։ Կրի քանակությունն ավելացնելու համար անհրաժեշտ է կրի վառարանները գործածել նաև շաքարի գործարաններում։*

*Վորոշ տեղերում կրի, ալեբաստրի և գաճի հանույթի համար գործադրում են պնեվմատիկական փորում, մեքենայական տրանսպորտ և հանքային վառելանյութեր։*

*Հոֆմանի վառարանների փոխարեն դրվում են ավելի կատարելագործված հանքային վառարաններ, վորտեղ բարձումն ու պարպումը մեքենայացման են յենթարկված։*

*Վառարանների վրա դրվում են մեքենայական փուքսեր։ Տեղ-տեղ աշխատանքը կատարում են եքսկավատորներով, հումքը վառարաններին տրվում է մեքենայացված յեղանակով, առավելագույն չափով ողտագործվում է վառարանների տարողությունը։*



*Ռացիոնալիզատորական ձեռնարկումներն արդեն հնարավորություն են տվել գեթևս 1928–29 թ. կրի և ալեբաստրի ինքնարժեքն իջեցնել 7,8 տոկոսով։ Այս արդյունաբերության մեջ ներդրվում են խոշոր գումարներ (5 տարվա ընթացքում 45 մլ. ռ.), նրա լրիվ վերակառուցման և ռացիոնալացման համար, վորը թե կավելացնի արտադրանքը և թե կիջեցնի ինքնարժեքը։*

## Ապակու արդյունաբերություն

*Ապակու արդյունաբերությունը նույնպես բավականաչափ հետամնաց է։ Մեծ մասամբ վատ է կահավորված։ Ձեռքի աշխատանքի տեխնիկան և մարդկային թոքերի աշխատանքն են գերիշխում։ Միայն վերջին ժամանակներս է, վոր մի քանի մեքենայացված գործարաններ են կառուցվել։*

*Ապակու 140 գործարաններից միայն 5-ն են մեքենայացված։ Մեկ բանվորի միջին արտադրանքը դեռևս չի հասել նախապատերազմյան մակարդակին։*

*Ապակու գործարանների ռացիոնալացումը նույնպես պետք է սկսել այն բանից, վոր նրանք նպատակահարմար տերիտորիալ տեղադրություն ունենան։ Ցանկալի չէ ապակին շատ հեռու տեղ փոխադրել, վորովհետև ջարդվածքի տոկոսը չափազանց կավելանա։*

*Ճիշտ է, այդ խնդրում միայն հեռավորությունը չէ մեղավորը, մեղավոր է նաև մեր անկուլտուրականությունը—վատ ենք փաթեթք անում, անփույթ ենք բարձում, անփույթ էլ պարպում ենք, մեր ճանապարհներն ու խճուղիները սոսկալի յեն, բեռնատարներն անխնա ու կոպիտ վերաբերմունք ունեն, և այդ ամենն ավելորդ ջարդվածքի ու ինքնարժեքի բարձրացման պատճառ է դառնում։*

*Ապակու արդյունաբերության ռացիոնալացման խնդրում հիմնականը բերանով փչելու փոխարեն Ֆուրկո մեքենաներով փչում կատարելն է։*

*Ապակու արտադրության մեքենայացման առաջին փորձերը շատ անհաջող յեղան, յերկար ժամանակ այդ մեքենայացված արդյունաբերության արտադրած ապակին ավելի թանգ էր, քան հին գործարանների արտադրանքը։ Բայց այդ «մանկական հիվանդությունները» անցկացան, այժմ գործը կանոնավորված է։*

*Ռացիոնալացման է յենթարկվում ապակու գործարանների ուժային տնտեսությունը։ Ինչքան հնարավոր է, էլեկտրական էներգիան բերվում է էլեկտրոցենտրալներից։ Գազոգեներատորների հետամնաց ձևերը փոխարինվում է ավելի կատարելագործված ձևերով։ Դեռ մինչև վերջին ժամանակներս կարծում եյին, թե ապակու արդյունաբերության ասպարեզում անընդհատ արտադրությունն անհնարին է։ Սակայն ամերիկյան ավտոմոբիլային արքա Ֆորդը ցույց տվեց, վոր այդպիսին հնարավոր է։*

*Այս հնգամյակում ապակու արդյունաբերությունը մեծ չափով վերակառուցվելու յե։ Ապակու գզալի մասն արտադրվելու*

յե մեքենայացված գործարաններում: Ապակու 8 գործարանների շինարարության մեջ ներդրվելու յե 216 մլն. ռ.:

Հենց միայն վառելանյութի ռացիոնալացման հետևանքով կատարվող ծախքերի կրճատումն ինքնարժեքն իջեցնելու յե 34 տոկոսով, իսկ արտադրողականության աճման հետևանքով բանուժի նվազումը՝ 20 տոկոսով: Այդ՝ ձեռքի արտադրության ապարիկում, իսկ մեքենայացված արտադրության ապարիկում բանուժի նվազման հետևանքով ինքնարժեքն իջնելու յե 40 տոկոսով, աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով՝ 32,7 տոկոսով:

Մեքենայացման յենթարկված գործարաններում ապակու ջարդվածքի տոկոսը հասցվելու յե 10–15-ի, այնինչ ձեռքի արտադրության գործարաններում այդ տոկոսը կազմում է 50–60:

## Նոր և տեղական շինանյութեր

Հիմնական շինանյութերից բացի, հարկավոր է գործածության դնել նաև նոր շինանյութեր: Միմիայն հիմնական շինանյութեր գործածելով շատ հեռու չենք գնա, այդ թե թանգ կնստի և թե՝ շինանյութերի մեծ պակաս կառաջացնի:

Շատ կարևոր է, օրինակ, գործածել ռոման-ցեմենտը, վոր Հրային կրի մի տեսակն է: Նա շինարարության շատ մասերում կարող է փոխարինել թանգարժեք պորտլանդ-ցեմենտին: Ցեվ քանի վոր ռոման-ցեմենտն ավելի եժան է, ապա այն մեծ չափով գործածելով մենք կեժանացնենք նաև շինարարությունը:

Անհրաժեշտ է նաև ընդարձակել մեկուսիչ նյութերի արտադրությունը. նրանց գործածությամբ մենք կնվազեցնենք աղյուսի պահանջը:

Արդեն սկսում է կարգավորվել ծղոտից և յեղեգից պատրաստվող շինանյութերի արտադրությունը, վորոնք չափազանց եժանացնում են շինարարությունը:

Զարգանում է այսպես կոչված ֆիբրոլիտի (պատրաստվում է տաշած փայտից), շլակային բետոնի և նման այլ շինանյութերի արտադրությունը:

Խոշոր դեր կխաղա դոմենյան շլակների օգտագործումը շինարարության մեջ. Նրանցից պատրաստում են հատուկ ցեմենտ, բետոնի լցացուցիչ նյութ, շլակային աղյուս, բետոն, յերկաթբետոն, բետոնային իրեր:

Ծրագրված է հնգամյակում ուժեղ չափով զարգացնել բազմաթիվ նոր շինանյութերի արտադրությունը: Ներկայումս նրանք շատ քիչ են գործածվում, իսկ շինարարության մեջ նրանց գործածելիս՝ կնվազի հիմնական շինանյութերի պահանջը, շինարարությունն ավելի կհեշտանա և կեժանանա:

Կարևոր է նույնպես ընդարձակել նոր ծածքային նյութերի արտադրությունը: Վոչ մի տեղ կտուրների համար այնքան յերկաթ չեն գործածում, վորքան մեզ մոտ: Ամբողջ Յեվրոպան և Ամերիկան կտուրների ծածքի համար շատ չնչին չափով են յերկաթ գործա-



ծում: Այնտեղ կտուրները ծածկում են կղմինտրով, հատուկ փայտե տախտակներով, արհեստական կամ բնական հղկաքարով, հատուկ խավաքարտով և այլն: Մեզ մոտ ևս սկսում է զարգանալ այս ծածկանյութերի գործածությունը, նպատակ ունենալով արնտեսել թանգարժեք յերկաթը:

Նոր ծածկանյութերի արտադրությունը մեզ մոտ դեռևս քիչ է կարգավորված, նրանց գործածությունը դժվարությամբ է զարգանում: Հիմնական շինանյութերի գործածության սովորույթը և նորերի նկատմամբ նախապաշարմունքը դեռևս շատ ուժեղ են: Այնինչ ամրության տեսակետից նոր ծածկանյութերի մեծ մասը հներին գերազանցում է: Յեվրոպայում թերթաքարով պատած կտուրներ կան, վոր 1200 տարի յե, ինչ դիմանում են:

Քանի վոր շինանյութերի մեծ մասը շատ անձեռնտու յե հեռու փոխադրել, ուստի անհրաժեշտ է մեծ չափով ուժ տալ տեղական շինանյութերի արտադրությանը: Դրա համար հարկավոր է այդպիսիք վորոնել համապատասխան հետազոտությունների կատարելու միջոցով:

Վոչ մի սուիթ բաց չպետք է թողնել բերովի շինանյութերը տեղական շինանյութերով փոխարինելու համար: Յեթե տեղականները բերովիներից վորոշ չափով ավելի վատ են, ապա այդպիսիք պետք է գործածել պակաս պատասխանատու մասերում:

Մինչև այժմ տեղական շինանյութերն անբավարար չափով են օգտագործվում: Այսպես, ամբողջ հին Ոդեսան շինված է տեղական նյութերից, իսկ այժմ այնտեղ նոր շինարարության համար օգտագործում են թանգարժեք կարմիր աղյուսը: Տեղական շինանյութեր գործածելով, մենք կիջեցնենք ինքնարժեքը: Բերեզնյակում, օրինակի համար, աղյուսը տեղական նյութերով փոխարինելով՝ 100.000 ռուբլու խնայողություն ունեցան:

Կրիվարոժյեյում տեղական կրաքարի գործածությունը շինարարությունն եժանացրեց 30 տոկոսով: Նույն տեղում կա ծածքի թերթաքար, բայց դեֆիցիտային յերկաթ են գործածում:

## ԳԼՈՒԽ IV

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ, ՊՐՈՖԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՒ ՏՆՏԵՄԱՎԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ

Արդյունաբերական շինարարության ռացիոնալացման և ինքնարժեքի իջեցման ծրագիրը, ինչպես տեսանք, չափազանց խոշոր է. դա շինարարության մեջ հեղափոխություն առաջացնելու մի իսկական ծրագիր է: Շինարարական տնայնագործական յեղանակների փոխարեն ծրագրվում է ստեղծել շինարարական խոշոր ինդուստրիա, վորտեղ ռացիոնալացումն առավելագույն չափի կլինի և շինարարության ինքնարժեքը կիջնի գրեթե կիսով չափ:

Ծրագրվում է 5-ամյակի վերջում լիովին վերացնել շինանյութերի պակասությունը, միաժամանակ յենթադրվում է լիակատար վե-

բակառուցում, ռացիոնալացում և ինքնարժեքի իջեցում անցկացնել: Ծրագրված է նույնպես շինարարության մեքենայացման ծախքերը 0.4 տոկոսից հասցնել 5 տոկոսի: Սեզոնային բանվորների փոխարեն ստեղծվելու յեն մշտական բանվորների կադրեր, մեծ չափով ավելացվելու յե ինժեներների և տեխնիկների թիվը:

## Շինանյութերի հնգամյակը

Շինանյութերի արտադրությունը հնգամյակի վերջում թե քանակապես և թե վորակապես աճելու յե խոշոր չափով: Ցեմենտի արտադրությունը 11,9 միլ. տակառից հասցվելու յե 41 միլ. տակառի, աղյուսինը՝ 5 միլիարդից 11 միլիարդի, տախտակեղենինը՝ 11,5 միլ. խոր. մետրից 27,7 միլ. խ. մ., բնական և արհեստական հղկաքարերինը՝ 53 միլիոնից 136 միլիոնի, կղմինտրինը՝ 36 միլ. հատից 566 միլիոն հատի:

Կտուրի խավաքարտի (տոլ) արտադրությունը 900.000 ռուլոնից (խոշոր փաթաթվածք) 2,3 միլ. ռուլոնի: Ռուբերոյիդի (նոր արհեստական ծածկանյութ է) արտադրությունը 105 հազար ռուլոնից բարձրանալու յե 1,5 միլիոնի, կրինը՝ 934.000 տոննից 2.399.000 տոննի, ալեբաստրինը՝ 429.000 տոննից 2.380 հազար տոննի, արկտիկյան տուֆինը (հրաբխային տեսակի նոր շինանյութ է)՝ 200.000 խոր. մետրից մեկ միլիոնի:

Սֆագնումի (տորֆից պատրաստվող արհեստական նոր շինանյութ է) արտադրությունը 150.000 քառ. մետրից հասցվելու յե 8.700.000 քառ. մետրի: Կտուրի յերկաթը գործածությունից հանվելու յե ամբողջապես: Կտուրի թերթաքարի արտադրությունը 600.000 հատից հասցվելու յե 45 միլիոնի, բետոնային իրերինը՝ 20.000 քառ. մետրից 400.000-ի, տրեպելինը (հատուկ շինարարական հող է) 20 հազար տոննից 200.000-ի, տրեպելային աղյուսինը՝ 40.000 հատից 100.000-ի:

Այս բոլոր թվերը ցույց են տալիս շինանյութերի, հատկապես նոր շինանյութերի վիթխարի զարգացումը: Այդ, իհարկե, խոշոր չափով կիջեցնի շինարարության ինքնարժեքը:

Շինարարության և շինանյութերի արտադրության այդ վիթխարի ծրագրի կատարումը կպահանջի, վոր մեր վողջ յերկիրը, բոլոր բանվորներն ու գյուղացիները, վողջ խորհրդային հասարակայնությունը և, առաջին հերթին, հենց իրենք՝ կառուցողները չտեսնված չափերով լարեն իրենց բոլոր ուժերը, կպահանջի, վոր հսկայական գումարներ ներդրվեն:

## Կիրառելի՞ է արդյոք հնգամյակի ծրագիրը

Ծրագիրը խոշոր է, միանգամայն արժանի պրոլետարական մեծ հեղափոխությանը: Մենք ուժ ունե՞նք արդյոք այն կատարելու,—որինական կերպով մեզ հարց կտա ամեն մի բանվոր և գյուղացի: Առանց տատանվելու մենք կպատասխանենք—այո՛, ունենք:



Մեր յերկրի վիթխարի չափերը, հսկայական բնական հարստությունները, մեր վողջ կյանքի վերակառուցման ավյունով տոգորված 160 միլիոն բնակչությունը, բանվորների և գյուղացիների զարկ տված ստեղծարար յեռանդի անսովոր պոռթկումները—այս ամենը պլանների կատարման այնպիսի նախադրյալներ են, վոր վոչ մի կասկածի տեղ չեն թողնում:

Ինչպես ամբողջ հնգամյակի, այնպես էլ շինարարության և շինանյութերի արտադրության ծրագրի կիրառելիության մենք [illegible] յերաշխիքներ ունենք: Նույնպես տարակույս չկա, վոր կկատարվի նաև շինարարության ռացիոնալացման և ինքնարժեքի իջեցման հնգամյա պլանը:

Խորհրդային պլանային տնտեսության առավելություններն այնքան մեծ են, վոր հնգամյակի առաջին տարիներն արդեն կատարվում են շատ ավելի մեծ չափով, քան յենթադրվում էր: 1928–29 թ. պլանների մեծ մասը կատարվեց ավելի քան 100 տոկոսով, և շինարարությունն էլ կատարվեց ծրագրվածից ավելի մեծ չափով:

1929–30 թվի պլանները հնգամյակով նախատեսվածից ավելի մեծ վերցվեցին:

Արդյունաբերական շինարարության մեջ նախատեսված 7 միլիարդ ռուբլու փոխարեն ներդրվեց 9 միլիարդ ռուբլի:

Հնգամյակի առաջին յերկու տարում պլանավորվող արդյունաբերության ընդհանուր արտադրանքը նախատեսված 47,5 տոկոսի փոխարեն աճեց 65 տոկոսով: Մեքենաշինության արտադրանքը յերկու տարում աճեց ավելի քան յերկու անգամ, էլեկտրոտեխնիկական արդյունաբերությունը՝ 2,7 անգամ (ըստ հնգամյակի պետք է լիներ 1,8 անգամ), գյուղատնտեսական մեքենաշինությունը՝ 2½ անգամ 1,7 անգամի փոխարեն, ցեմենտի արտադրությունը՝ 63,9 տոկոսի դիմաց 84,9 տոկոսով:

Այդ յերկու տարիներում արդյունաբերության կապիտալ ներդրումները կազմեցին 5,8 միլիարդ ռուբլի, հնգամյակով նախատեսված 3,9 միլիարդի փոխարեն:

1931 թվի [illegible] ավելի մեծ են վերցված: Արդյունաբերական շինարարության մեջ ներդրվում է 5–6 միլրդ. ռուբլի, այնինչ հնգամյակով նախատեսվում էր միայն 3 միլրդ. ռ.:

Նոր [illegible] համար [illegible] է, [illegible] մինչև հնգամյակի վերջը նախատեսվում է արտադրել 100 միլ. տակառ, հնգամյակով նախատեսված 41 միլիոնի փոխարեն, իսկ կիր՝ մինչև 9 միլիոն տոնն:

## Շինարարության հնգամյակը 4 տարում

Սրանով խնդիր է դրվում շինարարության հնգամյակը կատարել ավելի կարճ ժամանակամիջոցում: Բոլոր տվյալները կան յենթադրելու, վոր արդյունաբերական շինարարության, այն է՝ գործարանների կառուցման, ինչպես նաև շինանյութերի արտադրության հնգամյակը կկատարվի նույնիսկ ավելի շուտ, քան չորս

տարում: Ահա թե ինչպիսի ռեկորդներ կան պրոլետարիատի դիկտատուրայի յերկրի ժողովրդական տնտեսության մեջ, ահա թե ինչպիսի ուժեր են հայտաբերում մեր բանվորներն ու գյուղացիները:

Հնգամյա պլանի սկզբնական կազմության ժամանակ շատ բան չկարողացան հաշվի առնել: Այդտեղ խոսք չկար անընդհատ արտադրական տարվա մասին, վոր չափազանց ավելացնում է բանվորական օրերի թիվը: Հաշվի չեյին առել նաև սոցմրցման, հարվածայնության և մասսաների աշխատանքային խանդավառության անսովոր վերելքի հնարավորությունները:

Այդ ֆրոնտից յեկած տեղեկությունները ասում են այն մասին, վոր աշխատանքի նոր ձևերը—սոցմրցումն ու հարվածայնությունը չափազանց առաջ են մղել աշխատանքը բոլոր կողմերից և բարձրացրել են աշխատանքի արտադրողականությունը:

Կառուցողների աշխատանքի նորմաները բարձրանում են նաև շինանյութերի արտադրության ասպարեզում: Բանվորները հրաժարվում են գնահատումները բարձրացնելուց, տեղ-տեղ անգամ կամավոր կերպով իջեցնում են այդ գնահատումները, վորոնք, պետք է խոստովանել, ներկայումս բավական բարձր են: Այսպես, Պոդոլսկի ցեմենտի գործարանում բանվորական մի քանի խմբեր իջեցրին գնահատումները և ավելացրին իրենց բեռնվածությունը:

Լենինգրադում հարվածային վորմնադիրներն աղյուսի շարվածքի նորման 480-ից բարձրացրին 700-ի: Նույն Լենինգրադում Ֆաբրիկա-խոհանոցի շինաշխատանքներում աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 15–30 տոկոսով, Նովոռոսիյսկի ցեմենտի գործարաններում՝ 12 տոկոսով:

Ստալինգրադի տրակտորստրոյում մի ցեխի հավաքման ու տարքավորման աշխատանքները պետք է ավարտվեյին 1930 թ. ապրիլին, բայց փաստորեն ավարտվեցին 1929 թ. նոյեմբերի 7-ին: Մի այլ աշխատանք, վորն ամերիկացիների հաշվով պետք է ավարտվեր 113 օրում, ավարտվեց 62 օրում: Մեխանիկական ցեխի կտուրը պետք է ավարտվեր մեկ տարում, փաստորեն ավարտվեց 3 ամսում: Ցեմ Ստալինգրադի հսկան փաստորեն ավարտվեց մեկ տարում: Չտեսնված տեմպեր:

Դնեպրոստրոյում գերամերիկյան ռեկորդներ են շահում: Լոխվիցի շաքարի գործարանն ավարտվեց 6½ ամսում:

Ահա թե ինչպիսի թափ ունի մասսաների հերոսական խանդավառությունը: Սոցիալիստական շինարարության ասպարեզում ամենակարճ ժամանակամիջոցում նվաճումներ ձեռք բերելու համար մասսան աշխատում է ուժեղ թափով, կամավոր կերպով ամրացնում է աշխդիսցիպլինան, ինքն է պահանջում խիստ միանձնյա ղեկավարություն անցկացնել և սեփական նախաձեռնությամբ անում է մի շարք նյութական զոհողություններ:

Այս հերոսությունն ու ստեղծարար խանդավառությունը չափազանց անհրաժեշտ են կատարելու համար վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական մեծ վերակառուցման պլանը—



հնգամյա պլանը: Մասսաների ստեղծագործական վերելքը հարկավոր է անընդհատ առաջ տանելու համար շինարարության տեխնիկական կատարելագործումը, մշտական ռացիոնալիզատորական աշխատանքի համար, բարձր աշխդիսցիպլինա ստեղծելու համար:

## Մասսաների դերը շինարարության մեջ

Առանց մասսաների մասնակցության արդյունաբերական շինարարության մեջ հնգամյա պլանը չի իրագործվի: Մեզ հարկավոր են վոչ թե հրամանների պասսիվ կատարողներ, այլ գիտակից ու ակտիվ կառուցողներ:

«Առաջ մղել մեր արդյունաբերությունը, բարձրացնել նրա արտադրողականությունը, ստեղծել ինդուստրացման կառուցողների նոր կադրեր, ճիշտ սոցիալիստական կուտակում կատարել, այդ կուտակումները խելացի ձևով օգտագործել արդյունաբերության կարիքների վրա, խնայողության խստագույն ռեժիմ սահմանել, ձիգ տալ ապարատը, այն դարձնել եժան ու ազնիվ, մաքրել նրան կեղտից ու մրից, վորոնք պատել են նրան մեր շինարարության ընթացքում, սիստեմատիկ պայքար մղել պետական գույքը թալանողների ու վատնողների դեմ—այս բոլորը խնդիրներ են, վորը վոչ մի կուսակցություն չի կարողանա հաղթահարել առանց բանվոր դասակարգի բազմամիլիոն մասսաների ուղիղ և սիստեմատիկ օժանդակության: Ուստի մեր խնդիրն է՝ անկուսակցական բանվորների միլիոնավոր մասսաներին ներգրավել մեր վողջ շինարարական աշխատանքի մեջ» (Ստալին):

Իսկ մեր կառուցողների այսօրվա մասսաներն այնքան էլ չեն կանգնած արդյունաբերական շինարարության պահանջների բարձրության վրա: Մեծ մասամբ նրանք սեզոնային բանվորներ են, այսինքն՝ անկուլտուրական, կիսագրագետ և մեծ մասամբ անգրագետ գյուղացիներ: Իսկ «անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է գտնվում» (Վ. Ի. Լենին), սոցիալիստական շինարարությունից դուրս է գտնվում, կամ համենայն դեպս, այդ շինարարության մեջ իբրև ակտիվ մասնակից կարող է ներգրավվել մեծ դժվարությամբ միայն:

Բացի այդ, կառուցողների մեծ մասը, վորպես գյուղից նոր յեկածներ, համակված են մանր-բուրժուական տրամադրություններով, դժվարությամբ են յուրացնում արդյունաբերական պրոլետարիատի ունակությունները: Նրանք դեռ բավականաչափ ակտիվ չեն:

Ինչքան աճի շինարարության ինդուստրացումը, այնքան կնվազի կառուցող բանվորների սեզոնայնությունը, այնքան կավելանա մշտական բանվորների թիվը, կստեղծվի իսկական պրոլետարական հոգեբանություն, գիտակցություն և աշխատանքի դիսցիպլինա:

Մասսաների յեռանդն ավելի մեծ չափով ծավալելու համար անհրաժեշտ է առաջին հերթին մեծ թափ հաղորդել բանվորական

ինքնաքննադատությանը, վորպես ինքնագործունեությունը զարգացնելու հիմունքի: Բանվորներին ինքնաքննադատության մեջ ներգրավելը հնարավորություն կտա նրանց ավելի շուտ ըմբռնելու արտադրության շահերը, ավելի արագ համակվելու հասարակական շահերով:

Ինքնաքննադատությունը հնարավորություն կտա ավելի արագ բուժելու մեր շինարարության բազմաթիվ հիվանդությունները— բյուրոկրատիզմը, քաշքշուկը, քայքայողությունը, աշխատելու անընդունակությունը, ամեն տեսակ անհարթություններն ու անկանոնությունները և այլն:

Ճիշտ դրված ինքնաքննադատությունը կամրացնի նաև միանձնյա ղեկավարությունը:

Ղեկավարների վոչ-լավ աշխատանքը, անպատասխանատվությունը և կոնտրոլի բացակայությունն ինքնաքննադատության կրակի տակ առնելով՝ կարելի յե կարճ ժամանակում վերացնել:

Հսկայական նշանակություն ունի նաև բանվորական գյուտարարության լայն ծավալումը: Յեթե գյուտարարությունը փակված մնա լոկ մասնագետների նեղ շրջանակում, ապա դա բանի պետք չե: Հազարավոր մանր բարելավումներ, կատարելագործումներ և գյուտեր կկատարվեն միայն այն ժամանակ, յերբ գյուտարարության մեջ կներգրավվեն ամենալայն մասսաները:

Գյուտարարությունը խրախուսելու համար անհրաժեշտ է ավելի առատ պարգևատրել գյուտարարներին, քան թե հիմա. այս խնդրում «խնայողությունը» անտեղի յե: Գյուտարարի շուրջը պետք է նպաստավոր մթնոլորտ ստեղծել, ոգնել նրանց թե՛ նյութապես և թե տեխնիկական խորհուրդով:

Բանվորական առաջարկներն ու գյուտերը պետք է արագ կենսագործվեն, վորովհետև ամեն մի ձգձգում կսառեցնի մասսաներին:

## Արտադրական խորհրդակցություններ

Մասսաներին շինարարության մեջ ներգրավելու հիմնական ձևն են հանդիսանում արտադրական խորհրդակցությունները: Բանվորներին առավելագույն չափով արտադրական խորհրդակցությունների մեջ ներգրավելը շինարարական կուսբջիջների և պրոֆմիությունների ուղղակի պարտականությունն է:

Արտադրական խորհրդակցությունները պետք է ապրեն լրիվ կյանքով, դառնան շինարարության շարունակ գործող մանիվելները:

Արտադրական խորհրդակցությունների որակարգում չպետք է դնել ձևական, ձգձգված, քիչ հասկանալի ընդհանուր դեկուցումներ, այլ պետք է դնել այնպիսի կենսունակ հարցեր, վորոնք հուզում են բանվորներին, նրանց համար հասկանալի յեն, վորը նրանք կարող են քննության առնել և նրանց տալ այս կամ այն լուծումը:



Արտադրական խորհրդակցության աշխատանքն այնպես պետք է դնել, վոր նա ավելի շատ արդյունավետ լինի շինաշխատանքների համար: Բանվորներին արտխորհրդակցությունների աշխատանքի մեջ ներգրավելու լավագույն յեղանակն արդխորհրդակցությունների վորոշումներն արագ կատարելն է, կամ նրանց կատարումն անկարելի լինելու դեպքում՝ արագ պատասխանելը:

## ՎՈՐՍ–ի խնդիրները

Ռացիոնալացման և այդ գործում մասսաների ներգրավման խնդրում խոշոր դեր ունեն կատարելու շինարարական արդյունաբերության և շինանյութերի արդյունաբերության ռացիոնալացման համամիութենական ընկերության (ՎՈՐՍ) բջիջները: Այս ընկերությունը կազմակերպված է ԽՍՀՄ ԲԳՏ Ժողկոմատին կից:

Ընկերությունը նպատակ ունի միավորել բոլոր նրանց, վորոնք աշխատում են շինարարության և շինանյութերի արդյունաբերության ռացիոնալացման ասպարեզում, պայքարելու համար այդ ճյուղերի հետամնացության դեմ և ծավալելու ու խորացնելու համար աշխատավոր կառուցողների ստեղծարար նախաձեռնությունը աշխատանքի ռացիոնալացման գծով:

Ընկերությունն ոժանդակում է կիրառելու այն միջոցառումները, վոր ձեռնարկում է կառավարությունը շինարարության ռացիոնալացման ասպարեզում: Ինքն ընկերությունը ծանոթանում է շինարարության ռացիոնալացման աշխատանքների նախագծերի հետ, հավաքում և մշակման է յենթարկում հետազոտական ու գրական նյութերը և նրանցից հանում է այս կամ այն յեզրակացությունները:

Ընկերությունն ոժանդակում է ռացիոնալացման և ԽՍՀՄ ու արտասահմանյան շինարարության նվաճումների ուսումնասիրության գծով աշխատողների միջև փորձի փոխանակում կազմակերպելուն, վորի համար դնում է տարբերկրյա շինաշխատողների դեկուցումները, կազմակերպում է էքսկուրսիաներ դեպի խոշոր և որինակելի շինարարությունները:

Ընկերությունը մշակում և արմատացնում է հետազոտության, գիտության և լաբորատորական փորձերի միատեսակ պրիմներ ու յեղանակներ:

Ընկերությունն ստեղծում է ռացիոնալիզատորների նոր կադրեր, դասընթացների և խմբակների միջոցով բարձրացնում է նրանց վորակավորումը:

Ռացիոնալացման աշխատանքները ժողովրդականացնելու նպատակով ընկերությունը կազմակերպում է հրապարակական դեկուցումներ, զրույցներ, դասախոսություններ, կինո-սեանսներ, հարց ու պատասխանի յերեկոներ, կազմակերպում է գրադարաններ և ցուցահանդեսներ, մամուլում հրապարակում է ռացիոնալիզատորական աշխատանքները, հրատարակում է համապատասխան ժուռնալներ:

Ընկերությունը խորհուրդներ և տեղեկանքներ է տալիս տնտեսական կազմակերպություններին ու հիմնարկներին շինարարության ռացիոնալացման ու այդ աշխատանքի կազմակերպման հարցերի շուրջը:

Ընկերությունն ոժանդակում է բանվորական գյուտարարությանը, կազմակերպում է լաբորատորիաներ և այլ գիտական-հետազոտական հաստատություններ:

Ընկերության անդամները պրոֆմիությունների և կուսկազմակերպությունների հետ միասին յեռանդուն աշխատանք պետք է կատարեն կառուցող բանվորներին ընկերության շարքերը ներգրավելու և ընկերության ծրագիրը կատարելու ուղղությամբ: Բոլոր շինարարություններում և շինանյութերի արտադրության ձեռնարկություններում պետք է կազմակերպել ՎՈՐՍ-ի բջիջներ:

Աշխատանքն այնպես պետք է ծավալել, վոր բոլոր բանվորները համակվեն ռացիոնալիզատորական վոգով, վոր ամեն մի բանվոր աշխատի ամենուրեք մի վորևէ ռացիոնալացում կատարել:

Մենք այնքան վատ ենք աշխատում, վոր առանց բարձր տեխնիկա մտցնելու, հենց միայն նյութերի ոգտագործումը ռացիոնալացման յենթարկելով, գործիքները, աշխատանքի պայմանները, մարդկանց դասավորումը բարելավելով և այլն, կարող ենք հսկայական արդյունքներ ձեռք բերել:

Այս խոշոր խնդիրների իրականացման գործում մեծ անելիք ունեն առանձին բանվորները, պրոֆմիությունները և տնտեսավարները:

Յուրաքանչյուր կառուցող բանվոր շարունակ պետք է բարձրացնի իր ընդհանուր, աշխատանքային ու տեխնիկական կուլտուրան, դառնա սոցիալիզմի իսկական ակտիվ կառուցող, ակտիվ մասնակցություն ունենա վողջ արդյունաբերական շինարարությանը, կարողանա կարգապահություն պահպանել և ամեն կերպ ամրացնել միանձնյա ղեկավարությունը:

## Պրոֆմիությունների խնդիրները

Չափազանց մեծ են կառուցողների պրոֆմիության դերն ու պատասխանատվությունները: «Պրոֆմիությունները սոցիալիզմի դպրոց են» (Լենին): Սեզոնային բանվորների համար պրոֆմիությունը սոցիալիզմի կրկնակի դպրոց է: Նա պետք է կիսագյուղացիական սեզոնիկներից արդյունաբերական բանվորներ ստեղծի:

Կառուցողների պրոֆմիությունը շինարարության ինդուստրացման, ռացիոնալացման, ինքնարժեքի իջեցման, աշխատանքային դիսցիպլինայի, միանձնյա ղեկավարության ամրացման, մասսաներին շինարարությանը մասնակից դարձնելու համար պայքարողների առաջին շարքերումն է գտնվում:

Մեծ է նրա դերը նաև կառուցողների նոր կադրեր ստեղծելու գործում: Այդ աշխատանքի բավական մեծ մասը նրա վրա յե ընկ-



նում: Չկա վորևէ հարց, վոր այս կամ այն չափով կառուցողների պրոֆմիության հետ սերտ կապ չունենա:

ՀամԿ (բ) Կ ԿԿ-ն առաջարկեց պրոֆմիություններին մոբիլիզացիայի յենթարկել բանվորական լայն մասսաներին պայքարելու աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխդիսցիպլինայի բարձրացման, գործալքումների վերացման, սարքավորման, գործիքների ու մեխանիզմների նկատմամբ յեղած անփույթ վերաբերմունքի վոչնչացման համար, միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով այնպիսի բարոյական մթնոլորտ ստեղծելու ձեռնարկություններում, վոր գործալիքները և աշխդիսցիպլինան խախտողներն իրենց զգան բարոյապես դատապարտված, ընկերական միջավայրում կղզիացված:

## Կուսբջիջների խնդիրները

Մեծ են շինարարությունների կուսբջիջների դերն ու պատասխանատվությունները: Բոլոր այն խնդիրներում, վոր վերաբերում են շինարարության, նրա ռացիոնալացման, վերակառուցման, ինքնարժեքի իջեցման, միանձնյա ղեկավարության գործադրման, աշխդիսցիպլինայի, մասսաների լավագույն սպասարկման և այլն,—այդ ամենում նրանք պետք է հանդես գան իբրև կազմակերպիչ ու ղեկավար:

Իրենց աշխատանքով կուսբջջի անդամներն որինակ պետք է հանդիսանան բոլոր բանվորների համար: Նրանք առաջինը պետք է լինեն ռացիոնալիզատորական աշխատանքում, առաջինը սոցմրցման, հարվածայնության, միանձնյա ղեկավարության արմատացման և այլ գծերով:

## Մասնագետների և տնտեսավարների խնդիրները

Խոշոր են նաև տնտեսավարների և մասնագետների դերն ու պատասխանատվությունները: Նրանց վրա—շինարարության և շինանյութերի արդյունաբերության այդ հրամանատարական կազմի վրա խոշոր պատասխանատվություն է ընկնում մեծ վերակառուցման, հնգամյակի խնդիրների կատարման ասպարեզում: Նրանց խնդիրն է՝ լինել շինարարության տեխնիկական հեղափոխության, «հասնել և անցնելու» խնդրի կատարման ղեկավարները:

Ռացիոնալացումը և ինքնարժեքի իջեցումը նրանց առաջնակարգ պատասխանատվությունն է: Լավ ղեկավարություն կազմակերպել, միանձնյա ղեկավարություն անցկացնել, կարողանալ ինքնաքննադատություն ծավալել և այնտեղ ներգրավել մասսաներին, չմոռանալ նաև նրանց շահերը,—ահա թե ինչ է պահանջվում տնտեսավարներից:

Առանց լավ, ամուր, հեղափոխական և բարձրորակ հրամանատարական կազմի՝ կառուցողների բանակը չի կարող կատարել

եր խնդիրները։ Բայց աշխատելով դառնալ լավ, ամուր և, որ գլխավորն է, իրենց գործն իմացող հրամանատարներ, նրանք միաժամանակ չպետք է կտրվեն մասսաներից, այլ պետք է գլխավորեն նրանց։

Ոչ թե հակադրվել, այլ մասսաների հետ միասին, հենվելով նրանց լավագույն տարրերի վրա, տնտեսավարները պետք է հաղթահարեն այն բոլոր դժվարությունները, որ կանգնած են բովանդակ յերկրի և բովանդակ շինարարության առջև։

Յեվ միասին ընթանալով կուսակցական ու խորհրդային բարձրագույն մարմինների ցույց տված ուղիով, բանվորական մասսան, պրոֆաշխատողները, կուսակցականները և տնտեսավարները հեշտությամբ կկարողանան հաղթահարել այդ բոլոր դժվարությունները և արդյունաբերական շինարարության ռացիոնալացման ու ինքնարժեքի իջեցման հնգամյա պլանը կատարել ոչ թե հինգ, այլ չորս տարում, այդպիսով ոժանդակելով Խ. Միության սոցիալիստական արագ վերակազմության գործին և մոտեցնելով սոցիալիստական հասարակակարգի կառուցումը։

---



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Եջ |
|---|---|
| ԳԼՈՒԽ I. Արդյունաբերական շինարարության ռացիոնալացումը և ինքնարժեքի իջեցման նշանակությունը | 3—7 |
| ԳԼՈՒԽ II. Արդյունաբերական շինարարության ռացիոնալացման և ինքնարժեքի իջեցման ուղիները | 7—28 |
| ԳԼՈՒԽ III. Շինանյութերի արտադրության ռացիոնալացումն ու ինքնարժեքի իջեցումը | 28—41 |
| ԳԼՈՒԽ IV. Արդյունաբերական շինարարության խնդիրները և բանվորական մասսաների, պրոֆաշխատողների ու տնտեսավարների դերը | 41—50 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0292728

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

28.170